

Գուրգեն Մանուկեան

I. ՍՈՒՏԵ

Մեսրոպ Մաշտոցի աւագ աշակերտ Կորիւնի (~380-450 թթ.) «Վարք Մաշտոցի» աշխատութիւնը, որը «Հայկական տառերով յորինուած առաջին ինքնուրոյն պատմական երկն է»<sup>2</sup> եւ նուիրուած է Հայոց գրերի գիւտին, նրա հեղինակի կեանքին ու բեղմնաւոր գործունէութեանը, «Հայոց գրականութեան սկզբնաւորութեան միակ ժամանակակից եւ վաւերական յիշատակարանն է»<sup>3</sup>: Եւ ինչպէս Հր. Աճառեանը, այնպէս էլ Մ. Աբեղեանը հաստատել են, որ Կորիւնի երկի բուն բնագիրն ընդարձակն է, ոչ թէ համառօտ խմբագրութիւնը, որը կոչուել է «Փոքր Կորիւն»<sup>4</sup>: Հր. Աճառեանը նոյնիսկ գրել է. «Համառօտ Կորիւնը, պարունակելով ոչ-մեսրոպեան լեզուի տարրեր, չի կարող ամենեւին Կորիւնի հարազատ աշխատութիւնը լինել, քանի որ Կորիւնը մաքուր մեսրոպեան հայերէնի ներկայացուցիչ է»<sup>4</sup>:

Նրանք գտնում են, որ համառօտը կազմուել է աւելի ուշ՝ ընդարձակի հիման վրայ: «Յետին մի սրբագիր, չհաւանելով նրա խրթին ձեւերին, փոփոխութիւններ է կատարել, յատկապէս ըստ խորենացու

սրբագրել է Կորիւնի ընդարձակ բնագրի տարբերութիւնները»<sup>5</sup>:

Աբեղեանը գրել է. «Իբր ամփոփում կարող ենք յիշել, թէ փոքր Կորիւնը Զ-Ը դարերի յերկրուածք է՝ ձեւուած ընդարձակ Կորիւնի վրայից՝ սրա զանազան կէտերը սրբագրելով խորենացու համեմատ»<sup>6</sup>: Մ. Աբեղեանն ըստ ձեռագրերի կազմել է «Վարք Մաշտոցի» երկի ընդարձակ բնագիրը եւ այն հմտօրէն թարգմանել արեւելահայերէն: Այս բնագրից էլ կազմուել է Կորիւնի երկի Համաբարբառը: Բնականաբար, մենք ուսումնասիրել ենք սոյն բնագիրը:

Յամենայն դէպս, փորձենք համեմատել թէկուզ եւ մի հատուած՝ վերցուած «Վարք Մաշտոցի» երկի ընդարձակ եւ համառօտ շարադրանքից:

Ընդարձակում գրուած է. «Եւ գնորին աշակերտ Թաղիկ անուն, գայր զգաստ եւ բարեպաշտօն, հանդերձ եղբարբք, երանութեանն հասելոյ սպասաւոր սրբոյն ի փառս Աստուծոյ կարգէին» (էջ 96):

Համառօտում այս ընդգծուած մասը շարադրուած է այսպէս. «Եւ գնորին աշակերտն զգաստ եւ բարեպաշտօն զԹաղիկ...»:

Ընդարձակում այս հատուածի շարադրանքը կանոնաւոր է. զ նախդիր են ստացել բացայայտեալը եւ բացայայտիչը:

Համառօտում եւս պահպանուել է զ+հայցական կառոյցով բացայայտեալ-բա-

ցայայտիչ կապակցութիւնը, սակայն շարադրանքը պարզեցուած է:

Կորիւնի երկը կարեւորում է եւ՝ բովանդակութեան, եւ՝ լեզուի ու ոճի, եւ՝ այլ առումներով, մանաւանդ որ որոշ թիւրմբունումներ եւ տարակարծութիւններ կան նրա ծաւալի, բնագրի կազմութեան, կառուցուածքի, այլ մատենագիրների երկերի հետ առնչութիւնների եւ այլեւայլ հարցերի վերաբերեալ: Հետեւաբար, որքան ի մօտոյ ուսումնասիրուեն հեղինակի լեզուն եւ ոճը, յատկապէս բառապաշարը, շարահիւսական կառուցուածքների, այդ թւում նաեւ՝ այս ամէնին սերտօրէն առնչուող նախդրագործածութեան կարեւորագոյն հարցերը, այնքան կը յստակեցուեն բնագրին աղերսուող տարաբնոյթ խնդիրները:

Կորիւնի երկում կարեւորում է նախդրագործածութիւնը նաեւ նրանով, որ այն ոչ միայն մեր հարուստ մատենագրութեան՝ մեզ հասած առաջին պատմագրական երկն է, այլեւ բացառիկ սկզբնաղբիւր է մաշտոցեան գրերի ստեղծման, գրաճանաչութեան տարածման, Հայոց թարգմանական եւ ինքնուրոյն գրականութեան սկզբնաւորման վերաբերեալ, ինչպէս նաեւ նրանով, որ մեր առաջին պատմիչները՝ Ազաթանգեղոս, Փաւստոս Բուզանդ, Ղազար Փարպեցի, Մովսէս Խորենացի, օգտուել են նրանից՝ նաեւ ցուցաբերելով ինքնուրոյն մօտեցում:

Ահա թէ ինչու ձեռնամուխ ենք եղել քննելու Կորիւնի սոյն երկում նախդրագործածութեան դրսեւորումները՝ նկատի ունենալով ոչ միայն այս հարցում Հայագիտութեան ձեռքբերումները, այլեւ մեր նախորդ երկու աշխատութեամբ կատարած եզրայանգումները<sup>7</sup>:

Կորիւնի երկի լեզուի եւ ոճի մասին, ճիշտ է, ոչ այնքան հանգամանալից, գրել են շատերը, սակայն կարեւորում է Մանուկ Աբեղեանի եզրայանգումը: Նա, բնութագրելով սոյն գրուածքի լեզուն եւ ոճը, ասել է, որ այն «միակերպ չէ. մերթ կարճ ու հակիրճ է, մերթ երկարաբան ու խրթին»: Նա յորինում է շատ ճոռոմ պատկերաւորմամբ, աւելորդ զարդերով ու պաճուճանքներով խճողուած, ինչպէս ինքն է ասում, «ծաղկեցրած»: Նրա գրածը յաճախ մուծն է նաեւ անկանոն լեզուի կամ բարդ պարբերութիւնների պատճառով: Երբեմն պակասում են անհրաժեշտ բառեր, կամ շատ կան նախադասութիւնների փոխարինող իւրայատուկ նորահնար բարդ բառեր, այլեւ բառերի կիրառութիւն՝ ոչ մեզ ծանօթ, սովորական նշանակութեամբ: Վրան աւելացրէք եւ բնագրի մասամբ աղճատուած լինելը, եւ պարզ կը լինի, թէ ինչու այդ փոքրիկ գրքոյկը շատերի համար դժուար հասկանալի է եղել»<sup>8</sup>:

Հեղինակի երկի լեզուի նման վիճակը դրսեւորուել է նաեւ նախդրագործածութեամբ, որի հանգամանալից ուսումնասիրութիւնն առաջադրում է ոչ քիչ դժուարութիւններ, որոնց յաղթահարման գործում էական դեր ունեն բնագրի՝ աբեղեանական ընկալումները:

II. ՆԱԽԴՐԱԳՈՐԾԱԾՈՒԹԵԱՆ ՅԱՃԱԿԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԿՈՐԻՒՆԻ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՈՒՄ

Մաւալով ոչ մեծ այս կարեւորագոյն աշխատութիւնը, ըստ նշուած Համաբարբառի, ունի ընդամէնը 1675 բառարանային բառաքանակ, ըստ որում՝ միայն մէկ

1 Կորիւն, Վարք Մաշտոցի, Եր., 1941: Գրաբար բնագիրը, արեւելահայերէն թարգմանութիւնը եւ ծանօթագրութիւնները Մ. Աբեղեանի: Նոյնի վերահրատարակումը՝ Գաւր Կոստանի եւ անգլերէն թարգմանութեամբ, Եր., 1980: Համաբարբառ, Եր., 1972:  
2 Մ. Աբեղեան, Հայոց ճիւղ գրականութեան պատմութիւն, Բու. Ա., Եր., 1944, էջ 150  
3 Նոյնը, էջ 156  
4 Հր. Աճառեան, Հայոց գիրը, Եր., 1984, էջ 18

5 Մ. Աբեղեան, Աշ. աշխ., էջ 22  
6 Մ. Աբեղեան, Աշ. աշխ., էջ 42

7 Գ. Մանուկեան, Գրաբարի նախորդները եւ նրանց գործածութիւնը հայ պատմագրական երկերում (V-XI դարեր), Եր., 2002: Նախորդ-

գործածութիւնը 5-10-րդ դարերի եւ միջին հայերէնում հայոց շափածոյում, Եր., 2005  
8 Մ. Աբեղեան, Աշ. աշխ., էջ 156-157: Հայագետներից շատերն ընդունել են «Վարք»-ի ընդարձակ բնագիրը՝ մերթնով համառօտ խմբագրութիւնը, այն անուանելով «Սուտ Կորիւն»:

անգամ գործածուած բառերի քանակը 985 է, այսինքն՝ բառարանային բառաքանակի 58,8%-ը. այն կազմում է բառապաշարի կէսից աւելին, մի հանգամանք, որը որոշ տատանումներով յատուկ է 5-րդ դարի մեր մատենագրութեանը: Այսպէս, համաձայն Հայաստանի Հանրապետութեան գիտութիւնների զգալի ակադեմիայի հրատարակած Համաբարբառների տուեալներին՝ մէկ անգամ գործածուած բառերը, ըստ առանձին հեղինակների, կազմում են՝ Փաւստոս Բուզանդ, «Պատմութիւն Հայոց»՝ 42,72%, Եղիշէի Կողբացի, «Եղծ աղանդոց»՝ 47,6%, Եղիշէ, «Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին»՝ 48,63%, Մովսէս Խորենացի, «Պատմութիւն Հայոց»՝ 49,32%: Գրեթէ նման պատկեր է նաեւ հետագայ դարերի հայ պատմագրութիւնում: Սա, անշուշտ, ուշագրաւ երեւոյթ է, որը փաստում է այն հանգամանքը, որ ինչպէս Կորիւնը, այնպէս էլ հին եւ միջին դարերի մեր միւս արձակագիր հեղինակները, իսկ բանաստեղծներից յատկապէս Գրիգոր Նարեկացին, մշտապէս ձգտել են նորանոր բառերի գործածութեան, որը, ըստ երեւոյթին, լեզուաոճական առումով կարեւորուել է:

Ուշագրաւ է նաեւ ընդհանուր բառագործածութեան յաճախականութիւնը Կորիւնի գրքում: 1675 բառարանային բառերը գործածուել են 5882 անգամ, այսինքն՝ 28,47% յաճախականութեամբ, որը բարձր է նոյն դարաշրջանի միւս հեղինակների բառագործածութեան համեմատ (Եզնիկ՝ 8,61%, Եղիշէ՝ 11,06%, Խորենացի՝ 12,10%) միջին հաշուով ընդհանուր բառագործածութիւնը 11,52% է:

Այստեղ կարելի է եւ այսպիսի հաշուարկ կատարել: Եթէ «Վարք Մաշտոցի» գրքում եղած 1675 գլխաբառից եւ 5882 ընդհանուր բառաքանակից հանենք մէկ անգամ գործածուած 985 բառերը, ապա կը ստանանք 690 գլխաբառ՝ գործածուած 4897

անգամ, այն է՝ 14,09% յաճախականութեամբ:

Ուշագրաւ է եւ նախդրագործածութեան յաճախականութիւնը: «Վարք Մաշտոցի» գրքում գրաբարի վեց նախդիրները գործածուել են 883 յաճախականութեամբ, որը կազմում է ընդհանուր բառագործածութեան 15,01%-ը: Այն բարձր է Եզնիկի (12,52%), Եղիշէի (13,63%) գրքերում եղած նախդրագործածութիւնից, սակայն 0,5%-ով պակաս է Խորենացու գրքում եղածից: Պատմահօր գրքում այն կազմում է 15,64%:

Այսինքն՝ Կորիւնը լայնօրէն գործածել է գրաբարի նախդիրները, անշուշտ, հիմք ունենալով ժամանակի գրական հայերէնը, իհարկէ, առաջին հերթին՝ նոր թարգմանուած Աստուածաշնչի լեզուն:

Կորիւնի գրքում եղած 890 նախդրային գործածութիւններն, ըստ յաճախականութեան, ունեն հետեւեալ պատկերը՝ առ 43, գ 393, ընդ 18, ըստ 28, ի (յ) 397, ց 4 անգամ:

Նախդրագործածութիւնն ըստ հոլովների այսպիսին է՝

Հոլովներ	առ	գ	ընդ	ըստ	ի(յ)	ց
Սեռ.	-	-	1	-	-	-
Տր.	-	-	6	28	62+(1)	-
Հայց.	19+(7)	362+8	10	-	183+(7)	4
		փոխանուն սեռական				
Բաց.	(13)	14	-	-	131+(13)	-
Գործ.	4	9	1	-	-	-
Ընդամենը	43	393	18	28	397	4

(Առ+ի գործածութիւնը՝ փակագծերում):

Նախդիրների սոյն յաճախականութեան գործածութիւնն իր կարեւոր դերն ու նշանակութիւնն է ստանում համապատասխան հոլովների հետ նրանց իմաստա-

յին դրսեւորումներում եւ շարահիւսական կիրառութիւններում:

III. ՆԱԽԴԻՐՆԵՐԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԴՐՍԵ-ԻՈՐՈՒՄՆԵՐԸ

Դարեր շարունակ մշտապէս զարմանք է յարուցել Աստուածաշնչի՝ Հայերէն թարգմանութեան լեզուական կատարելութիւնը, որտեղ բառային, լեզուաքերական եւ լեզուաոճական բազում միջոցների հետ հմտօրէն գործածուած են նաեւ նախդիրներն ու նախդրութիւնները: Լեզուական այս բացառիկ իրողութեանը տրուել են տարբեր եւ այն էլ ոչ այնքան հիմնաւոր բացատրութիւններ: Այդպիսին է եւ 5-րդ դարի մեր հարուստ մատենագրութեան կատարելութեան հասցուած լեզուն, որը եւս առաջադրում է ինչպէ՞ս հարցադրումը: Նոյնը կարելի է ասել եւ Կորիւնի երկի լեզուում նախդրագործածութեան վերաբերեալ: Կորիւնն ստացել էր վանական կատարեալ կրթութիւն, լաւատեղեակ էր Աստուածաշնչին, որտեղից իր գրքում կատարել է բազում մէջբերումներ: Հետեւաբար, Աստուածաշնչի լեզուն, այդ թւում նաեւ՝ նախդրագործածութիւնն ուղղակիօրէն իրենց արտացոլումն են գտել նրա գրուածքում: Ինչ վերաբերում է եղած լեզուական անկանոնութիւններին, դրանք հեղինակային լեզուաոճական անհատական դրսեւորումներն են: Նման անկանոնութիւնների հետեւանքով երբեմն հնարաւորութիւն է չի լինում պարզորոշ ներկայացնել «Վարք»-ում նախդրագործածութեամբ արտայայտուած իմաստներն ու շարահիւսական կիրառութիւնները:

Այնուամենայնիւ, փորձենք որոշել Կորիւնի երկում գրաբարի վեց նախդիրների կիրառութիւնները:

Այսպիսի ուսումնասիրութիւնը կարեւորում է տեսական եւ գործնական նկատումներով:

Երբ բացայայտուած է նախդրագործածութիւնը 5-11-րդ դարերի արձակ գրուածքներում եւ անգամ 5-16-րդ դարերի չափածոյում, անշուշտ, տեսական եզրայանգումների համար կարեւորում են «Վարք Մաշտոցի» երկում սոյն խօսքի մասի կիրառութեան դրսեւորած նմանութիւններն ու տարբերութիւնները:

Նախդրագործածութեան նման ուսումնասիրութիւնը ոչ միայն բացայայտում է այս երկում նախդիրների գործածութեան օրինաչափութիւններն ու հեղինակային անհատական իւրայատկութիւնները, այլեւ կարող է ուսումնասիրողին օգնել Կորիւնի երկի բնագիրն առաւել պարզորոշ ընկալելու եւ բացայայտելու գործընթացում, մանաւանդ, ինչպէս ասուեց, բաւականին բարդ ու խրթին է հեղինակի լեզուն:

Ա. ԱՌ ՆԱԽԴԻՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ<sup>9</sup>

Առ նախդիրը կիրառուել է 43 անգամ, որը կազմում է Կորիւնի երկում եղած նախդիրների գործածութեան 5,05%-ը: Այն յաճախականութեամբ բարձր է 5-րդ դարի՝ քննուած երկերում նոյն նախդիրների գործածութիւնից (Եզնիկ՝ 2,71%), Եղիշէ՝ 3,51%, Խորենացի՝ 4,01%): Ըստ հոլովների գործածուել է հետեւեալ կերպ՝ տրականի հետ՝ 2, Հայցականի հետ՝ 19, գործիականի հետ 4 անգամ, ընդամենը՝ 23 անգամ:

Առ ի կապակցութիւնը գործածուել է Հայցականի հետ՝ 7 եւ առ+ի→ բացառականի կազմում՝ 13 անգամ, ընդամենը՝ 20 անգամ:

9 Հմմտ. Հ. Պօղոս Գոճանեան, «Առ՝ նախագործածութիւնը դասական գրաբարի մէջ եւ գոյականը՝ որպէս ուրոյն հոլով...», ուշագրս դուածը («Հանդէս ամսօրեայ», 2001, էջ 1-35):

ա) առ+հայցական

Տասնինը գործածութիւնները հայցական հոլովի հետ կազմել են շարահիւսական զանազան կիրառութիւններ:

Դրանք են՝ յանգման, մատուցման, վերաբերութեան, ուղղութեան անուղղակի խնդիրներ եւ ուղեւորման, դադարման տեղի պարագաներ:

1) Յանգման անուղղակի խնդիր

Այդպիսի խնդիրներ են վերցրել հասանել, յարել, մատուցանել բայերը:

Օր.՝ «Եկեալ հասանէր առ իս հրաման առն միոյ» (22):

«Հասանէր առ սուրբ կաթողիկոսն Հայոց Մեծաց» (44):

«Ամենայն մատուցելոց առ նա՝ զնոյն պատուիրեալ գուշակէր» (86):

Սոյն գրքում կայ միայն մի օրինակ, որտեղ կիրառուած է իբրեւ առ+հայցական կապակցութիւնը:

«Մատուցեալ յարէին յԵզնիկն, իբրեւ առ ընտանեգոյն սննդակից» (74):

Այստեղ «յարէին յԵզնիկն» կապակցութիւնում ի+հայցական կառոյցը յարել բայի թելադրանքով դրսեւորել է յանգման իմաստ, իսկ իբրեւ առ... սննդակից կառոյցը եւս (իբրեւ առ նախադրութիւն – նախորդ+հայցական հոլով) դրսեւորել է շարահիւսական նոյն կիրառութիւնը:

2) Մատուցման անուղղակի խնդիր

Մատակարարել բայի թելադրանքով կազմել է մատուցման անուղղակի խնդիր:

«Քանզի միոյն Աստուծոյ ամենազարի շնորհք առ ամենայն ազգս երկրածնաց մատակարարին» (52):

Թարգմ.՝ «Քանի որ մէկ ամենազօր Աստուծո շնորհքն է մատակարարուած բոլոր հողածին մարդկանց»:

3) Վերաբերութեան անուղղակի խնդիր

«Իբրեւ որդւոյ առ հայր՝ հպատակութիւն ցուցեալ» (62):

Այստեղ արդէն իբրեւ նախադրութիւնը եւ առ նախդիրը գործածուած են առանձին եւ տարբեր կիրառութիւններ ունեն:

Թարգմ.՝ «Ինչպէս որդին հոր նկատմամբ՝ հպատակութիւն ցուցաբերելով»:

4) Ուղղութեան անուղղակի խնդիր

«Յաղաչանս առ Աստուած մատուցեալ զփոխարէն բարեացն հատուցանել հայցէ» (32):

Թարգմ.՝ «Աղաչանքով դիմելով Աստուծուն՝ խնդրում է»:

Կարող է մեկնաբանուել նաեւ որպէս յանգում:

«Նոյնպէս առաւել հոգի մտի արկանէր զհամաշխարհականս սփոփելոյ եւ առաւել աղօթս մշտնջենամուռնչս եւ բազկատարած պաղատանս առ Աստուած եւ արտասուս անդադարս, զմտաւ ածելով զառաքելականն, եւ ասէր հոգալով» (40):

5) Ուղեւորման տեղ

Ուղեւորման տեղ կամ ուղեւորման հայցական է կազմուել տեղափոխութիւն ցոյց տուող առաքել, բերել, գալ բայերի միջոցով:

«Առաքէր առ արքայն յերկիրն Հայոց» (44):

«Նա առաքէր զոմն Վահրիճ անուն... առ այր մի երէց» (44):

«Եւ առ պատուական հարսն առաքեալ» (74):

«Բերէր առ եպիսկոպոսն Ասորոց» (50):

«Առ երանելին Մովսէս եկեալ» (54):

6) Դադարման տեղ

Կայ ընդամէնը այսպիսի մի օրինակ՝ «Առ որս թողեալ վերակացուս հաւատացելոցն» (70):

բ) առ+գործիական

Առ նախդիրը գործիական հոլովի հետ երկուական գործածութիւն ունի՝ երկուսը

տեղի պարագայի, միւս երկուսը ժամանակի պարագայի դրսեւորմամբ: Երկու դէպքում էլ առկայ է մօտաւորութեան իմաստը:

1) Տեղի պարագայ

«Հոգելից ուրախութեամբ եկեալ հասանէր ի Հայաստան աշխարհն, ի կողմանս Այրարատեան գաւառին, առ սահմանօք Նոր Քաղաքին» (50):

«Եւ մինչդեռ այնպէս մերձաւորացն առ իրեւ զհոգեւոր եռանդն ածէր» (90):

2) Ժամանակի պարագայ

«...լինել սպասաւոր արքայատուր հրամանացն առ հազարապետութեամբն աշխարհիս Հայոց՝ Առաւանայ ուրումն» (36):

«Առ որով ժամանակաւ Արձիւղ անուն թագաւորեալ Վրաց» (72):

Բ. ԱՌ Ի ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ

ա) Առ ի+տրական

Հինգերորդ դարի մատենագրական երկերից միայն Կորիւնի եւ Ագաթանգեղոսի գրքերում կայ տրական հոլովի հետ առ ի զուգադիր նախդիրների մէկական գործածութիւն՝ նպատակի պարագայի իմաստի դրսեւորմամբ:

«Անդ քաջալերութիւն յորդորական վարդապետութեան առ ի յառաջադէմ ընտրութեանն՝ պսակահաս քրիստոսադիր կիտին» (Կորիւն, 82):

Պէտք է ասել, որ Կորիւնի երկի բնագրի նշուած էջի տողատակի 5-րդ ծանօթագրութիւնում ասուած է, որ երկու ճառընտիրներում (≈ԺԴ–ԺԵ եւ ≈ԺԶ դարեր), որտեղ կան սոյն երկից որոշ հատուածներ, ընտրութեանն-ի փոխարէն կայ ընտրութիւն տարրնթերցումը, սակայն բնագիր կազմողը՝ Մ. Աբեղեանը, նախընտրել է ընտրութեանն ընթերցուածը:

Այս առումով սովորական է առ ի+հայցական կառոյցը, որպիսին կայ Կորիւնի

(7), Եզնիկի (7), Եղիշէի (10) եւ Խորենացու (18 անգամ) գրքերում<sup>10</sup>:

բ) Առ ի+հայցական

Վ. Քոսեանն իրաւացիօրէն գրել է, որ նպատակի եւ պատճառի իմաստի արտայայտման համար առ նախդիրը շատ յաճախ զուգակցուած էր ի նախդիրին՝ դրուելով անորոշ դերբայի, բայանուն կամ այլ գոյականի հայցականի վրայ<sup>11</sup>:

Կորիւնի գրքում առ ի+անորոշ դերբայ, առ ի+գոյական կառոյցներով դրսեւորուել է նպատակային յարաբերութիւն:

«Առ ի յարդարել եւ զնոցա հարուստ ամացն ծնունդս առեալ՝ պարզախաւսս... կացուցանէին» (54):

«Մատենագրել առ ի պահեստ յաւիտեանցն, որ գալոցն էին» (54):

«Ժողովեալ մանկունս առ ի հիւթ վարդապետութեանն» (60):

«Բազում նմանութիւնս ... վասն յարութեանական յուսոյն առ ի հանդերձեալսն յերկրել կազմեալ» (78):

«...զի հեշտընկալք ... մարմնական իրաւք զբաղելոցն լինիցին, առ ի սթապիլ եւ զարթոցանել եւ հաստահիմն առ ի խոստացեալ աւետիան քաջալերել» (78):

Կորիւնի երկի Համաբարբառում<sup>12</sup> (էջ 29) սխալմամբ առ ի ներքոյ-ը ներկայացուած է որպէս առ ի+հայցական կառոյց, մինչդեռ ի ներքոյ նախադրութիւն է, որի սկզբից աւելացուել է նաեւ առ նախդիրայն, որպէս նախադրութիւն, պահանջել է յոգնակի սեռականով խնդիր:

10 Նպատակի պարագայ իմաստով կը գործածուի առ+հայցական, ո՛չ երբեք՝ առ ի+տրական (ՀԱ-ի խմբագրութիւն):

11 Վ. Քոսեան, ԱԶ, աշխ., էջ 188

12 Սոյն Համաբարբառը կազմուած է բաւականին անխմբ. կան որոշակի անճշտութիւններ:

«...զծախելեացն յիշատակարան պատմեն ամենայն ուրեք՝ առ ի Աերքոյ երկնից»<sup>13</sup> (30):

գ) Առ+ի (յ) → բացառական

Ի նախդիրը բացառական հոլովի կազմում գործածուել է 131 անգամ, իսկ առ նախդիրի զուգակցմամբ կայ ընդամենը 13 կիրառություն<sup>14</sup>: Ի նախդիրը բացառականի կազմում սովորական է, եւ որեւէ առանձնայատկութիւն չի արձանագրուում: Այնպէս որ, իրականում ոչ թէ առ ի+բացառական կառոյց է, այլ առ+ի բացառական կառոյց, քանի որ ի նախդիրը ձեւաւորուում է բացառական հոլովը: Հետեւաբար, այստեղ պէտք է խօսել ի նախդիրով բացառականի հետ առ նախդիրի գործածութեան մասին, ինչպէս արել ենք սոյն աշխատանքում: Ընդունուած է, որ առ նախդիրը, բացառական հոլովի հետ գործածուելով ի նախդիրին զուգահեռաբար կամ՝ առանց դրա, դրսեւորուում է մի քանի իմաստներ, որպիսիք են պատճառի, նպատակի, տեղի պարագաները եւ սահմանափակման, անջատման, Աերգործման անուղղակի խնդիրները:

Կորիւնի գրքում բացառական հոլովի հետ առանց ի նախդիրի առ նախդիր չի գործածուել, իսկ առ+ի → բացառական զուգակցումը, ինչպէս ասուեց, սոյն հոլովի հետ կիրառուել է 13 անգամ՝ Աերգործման, սահմանափակման անուղղակի խնդիրների եւ նպատակի պարագայի իմաստների դրսեւորմամբ:

Ներգործման անուղղակի խնդիր է կազմուել մի քանի նախադասութիւններում:

«Հայրենակատար մեծարեալ պայմանաւ, որ առ ի մէնջ՝ հաճեցի» (36):

Կորիւնն, իր սովորութեան համաձայն, այստեղ եւս գրել է խճողուն ոճով, որը բացատրել է Մ. Աբեղեանը (էջ 307, ծն. 49) եւ այն թարգմանել կրատրաձեւ (85):

«Ըստ աւրինակի գրելոցս առ ի մէնջ հարքն ի կատարումն դարձան» (96):

Պէտք է բուժով տրոհել՝ «առ ի մէնջ՝ հարքն...»:

Աբեղեանը թարգմանել է՝ «մեր գրածի համեմատ» (145):

Բնագիրը բառացի կը լինի «մեզնից (մեր կողմից), գրածի համեմատ»:

Տեսիլ խաչանման լուսաւոր շողաւոր ձեւ երեւէր ի վերայ ապարանիցն, յորում երանելին վախճանէր, զոր ամենայն ուրուք ինքնատես եղեալ, եւ ոչ առ լուսկերէ պատմեալ» (94):

Բառացի կը լինի՝ «ոչ թէ ընկերոջից պատմուած»:

Կան նախադասութիւններ, որոնցում նշուած կառոյցներով կազմուել է սահմանափակման անուղղակի խնդիր:

«Ոչ սուտապատում ճարտարախաւս եղեալ առ ի մերոց բանից զհաւրէն իմոյ կարգեցաք» (98):

Թարգմ.՝ «Ոչ թէ սուտապատում ճարտարախօս լինելով մեր խօսքերով՝ իմ հօր մասին կարգեցինք [այս]...» (147):

«...զի՞նչ ասիցեմք զզուգականացն զառ ի միմեանց պատուեալ զգովութիւնս» (28):

«Գովութիւն ամենայն աստուածասէր ընտրելոցն ի Տեառնէ է, որ՝ ի հրեշտակաց, որ՝ առ ի միմեանց» (34):

Հնարաւոր է, որ ի հրեշտակաց եւ առ ի միմեանց բացառականներն իմաստային որոշ նրբերանգային տարբերութիւն ունենան: Այնուամենայնիւ, Աբեղեանը դրանք շարահիւսական առումով ներկայացրել է հաւասարարժէք (83):

13 Հմմտ. Գ. Թոսունեան, Գրաբարի նախադրութիւնները (V-XI դդ.), - «Լեզուի եւ ոճի հարցեր», VII, Եր., 1983, էջ 66-67  
14 Համաբարբառում (էջ 29) առ ի գուգակցմամբ 5 օրինակ սխալմամբ կիրառուած է համարուել ոչ թէ բացառական, այլ տրական հոլովի հետ:

Գ. 2 ՆԱԽԴԻՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ

«Վարք Մաշտոցի» գրքում զ նախդիրը գործածուել է 393 անգամ՝ հետեւեալ համամասնութեամբ՝ տրական՝ 0, հայցական՝ 362, +8 փոխանուն սեռական, բացառական՝ 14, գործիական՝ 9:

Կորիւնը զչափ առնուլ յարադիր բայի թելադրանքով զ նախդիրը գործածել է «զչափ առեալ զիրացն հաստատութեան» (58)՝ իբրեւ յաւելադիր կիրառութիւն:

Թարգմանուած է՝ «իսկ երբ իրերի հաստատութիւնը փորձեցին» (107):

Սա եզակի օրինակ է, քանի որ Աստուածաշնչում քանիցս կան նման գործածութիւններ (Հմմտ. ՆՀԲ, II, էջ 573):

Օրինակ՝ «Զի զչափ առցուք զհեղուքնս նորա» (Իմաստ., Բ 19):

«Զքո բարեարարութեանդ զչափ առեալ հոգասցուք» (Իմաստ., ԺԲ 22):

«Զի զչափ առից զձեր, եթէ յամենայնի հպատակ իցեն» (Բ Կոր., Բ 9):

Այս օրինակներում զչափ առնուլ (=փորձել, քննել) բայական յարադրութեան հետ դրուել է գ+սեռական կիրառութիւն:

Պէտք է կարծել, որ սա զ նախդիրի յաւելադիր գործածութիւն է:

ա) Զ+հայցական

Զ նախդիրը հայցական հոլովի հետ գործածուել է աւելի քան 370 անգամ, որը կազմում է այդ նախդիրի ամբողջ գործածութեան (393) 94,14%-ը, հեղինակի գրքում ընդհանուր նախդրագործածութեան (883) 44,15%-ը:

1) Անշուշտ, հիմնականը զ նախդիրի՝ որոշիչ յօդի նշանակութեամբ կիրառութիւնն է: Զ նախդիրը դիրքային առումով եւս գործածուել է բաւականաչափ կանոնաւոր, սակայն կան եւ շեղումներ:

Գոյականի հետ այս, այդ, այն ցուցական դերանունների յետադաս գործածու-

թիւններ չկան, հետեւաբար նման դիրքերում զ նախդիրի կրկնուելու վերաբերեալ փաստերը բացակայում են, սակայն կան դէպքեր, երբ զ նախդիրը կրկնուում է նախադաս լրացման եւ լրացեալի վրայ:

Օրինակ՝ «Զսակաւագոյն զանուանս յայտ առնէ» (26):

«...զնոցա զանընդդիմակաց զնահատակութիւնս» (26):

«...առաքեալն սուրբ ոչ գտեալ առ ժամայն զընդելակիցն զՏիմոթէ» (90):

2) Փոխանուն սեռական

Կան 8 փոխանուն սեռականներ (գուցէ եւ աւելի), որոնք Համաբարբառում (էջ 78) հաշուարկուած են հայցականի կազմում: Զեղչուած լրացեալի զ նախդիրը պահպանուել է սեռականով դրուած նախադաս լրացման վրայ, որի վերջում աւելացուել է ն որոշիչ յօդ:

«Սոյն օրինակ եւ ամենայն գիրք հոգեպատումք նշանակեալ ունին զքաջութիւնս ամենայնն զօրաց. զոմանց՝ ըստ աստուածեղէն կրօնիցն զբարեյաղթութիւն, եւ զոմանց՝ ըստ աշխարհակիր կարգաց զմարտից եւ զպատերազմաց արութիւնսն, եւ որպէս զՆերքոտայն եւ զՍամիսոսիս եւ զԴաւթայն» (26):

«Եւ զոմանց զբնական զիմաստութիւն գովեալ աստուածեղէն իմաստութեամբն հանդերձ, որպէս զՅովսէփայն յԵգիպտոս, եւ զԴաւիթիս ի Բաբելոն» (26):

Մ. Աբեղեանը հմտօրէն թարգմանել է՝ պահպանելով զեղչումները.

«...ինչպէս Ներքովիսը, Սամսոնինը եւ Դաւթինը» (75):

«...ինչպէս Յովսէփինը Եգիպտոսում եւ Դաւիթիսինը Բաբելոնում» (75):

Մէկ այլ տեղ զ նախդիրը կրկնուել է սեռականով դրուած լրացման՝ երեք բազմակի լրացումների վրայ, իսկ լրացեալը զեղչուած է:

«Եւ ժողովել մանկունս առ ի նիւթ վարդապետութեանն, առաւել զգազանամիտ զվայրենագոյն զճիւղաբարոյ կողմանցն» (61):

Ըստ Աբեղեանի թարգմանութեան՝ «...մանուկներ ժողովեց... կողմերինը» (109):

«Ձդանկաց երկուց ընծայելոցն գովէ... գյաւժարութիւն առաւել քան զմեծացն» (30):

3) Քանգ+գ+հայցական կառոյցով կանոնաւորապէս կազմուել է անականի համեմատութեան աստիճանը:

«...առաւել քան զկար մեր» (22):

«...զորս եւ պատուական քան զաշխարհական վաճառս համարիլ» (26) եւ այլն:

Նախդիրն աւելացուել է հայցական հոլովով դրուած բացայայտիչ-բացայայտեալի վրայ:

«Միանգամայն եւ փառաւոր աննելով զԱստուած զմեծանունն Քրիստոս» (65):

բ) Զ+բացառական

Բացառական հոլովի հետ զ նախդիրը, գործածուելով 14 անգամ, դրսեւորել է վերաբերութեան անուղղակի խնդրի իմաստ (պատմական բացառական):

«ԶԱզգբանազեան Ազգին եւ զՀայաստան աշխարհին զաստուծապարգեւ գրոյն, եթէ երբ եւ յորում ժամանակի մատակարարեցան» (22):

«Աստուծոյ բարերարին այսպէս բարեխորհեալ զիրոց սիրելեաց» (24):

«...զկնոջէն քանանացոյ մեծ զհաւատոցն ասէ» (30): Հմմտ. էջ 64, 66, 74, 76, 90, 98:

Նման կիրառութիւններ քաղուած են նաեւ Աստուածաշնչից:

«Մի անփոյթ առնել զԶնորհացոյ, որ ի քեզ են...» (76), (Հմմտ. Ա Տիմ., 7 14):

Թարգմ.՝ «Անփոյթ չպիտի լինես շնորհքիդ վերաբերմամբ»:

գ) Զ+գործիական

Կորիւնի գրքում զ նախդիրը, գործիական հոլովի հետ գործածուելով 9 անգամ, դրսեւորել է մի քանի իմաստներ՝

1) Դադարման մօտաւոր տեղ

«Պատահէին երանելոյն զափամբ Ռահ գետոյն» (54):

Թարգմ.՝ «Ռահ գետի ափին դիմաւորեցին»:

2) Ընդհանրապէս տեղ

«...ձեռն արկանէր զգաւառովն» (40):

Այստեղ փոխաբերական իմաստ կայ. այն բառացի նշանակում է՝ ձեռքը դեպք գաւառին, գաւառի շուրջը, այսինքն՝ իր ձեռքն առաւ գաւառը:

Մ. Աբեղեանն իրաւացիօրէն թարգմանել է բուն իմաստով՝ «սկսեց [քարոզել] գաւառում» (89):

«Ապա դարձեալ ելանէր, շրջէր զտեղեալք կարգելովք եւ զգաւառաքն աշակարտելովք աշխարհին Հայոց» (64):

«Նորա շրջեալ զամենայն աշակերտաւքն» (72):

Մի դիտողութիւն: Վ. Քոսեանը գրել է, որ գ+գործիական կառոյցով կազմուած է դադարման տեղի պարագայ ուղեւորութիւն ցոյց չտուող բայի մօտ: Այդպիսի բայեր են՝ անցանել, բնակել, բանակել, գտանել, դարմանել, հանգչել, նստել, շրջել եւ այլն<sup>15</sup>: Սակայն կարծում ենք, որ նշուած բայերը համարժէք չեն, քանի որ անցանել, նստել, շրջել եւ այսպիսի այլ բայեր ոչ թէ դադարման տեղ, այլ ընդհանրապէս տեղ են ցոյց տալիս: Այսինքն՝ կայ տեղի երեք տարատեսակ՝ ուղեւորման տեղ, դադարման տեղ եւ ընդհանրապէս տեղ: Այսպէս, դադարման տեղ է՝ «որ բնակեալ էք զծովե-

15 Վ. Քոսեան, Գ. աշխ., էջ 212-213

զերթը» (Եսայի, Թ 1): Մինչդեռ ընդհանրապէս տեղ է արտայայտուած հետեւեալ օրինակներում՝

«Շրջեցարուք զՍիովնիս» (Սաղմ., Խէ 13):

«Նաւիցեմք զպետք ժամանակագրական ծովուս» (Ագ., 15):

Դ. ԸՆԴ ՆԱԽԴԻՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ

Ընդ նախդիրը Կորիւնի երկուս գործածուել է 18 անգամ՝ ընդ+սեռական՝ 1, ընդ+տրական՝ 6, ընդ+հայցական՝ 10, ընդ+գործիական՝ 1:

ա) Ընդ+սեռական

«Վարք Մաշտոցի» գրքի Համաբարբառում (էջ 83) սեռականի հետ ընդ նախդիրի որեւէ գործածութիւն չի նշուած, մինչդեռ կայ այդպիսի մի կիրառութիւն՝

«Եւ բարեխաւսել նորա վասն սրբոց եւ բարեխաւսել Հոգւոյն Սրբոյ՝ առ ի վարդապետելոյ մեզ, զի ընդ միմեանց բարեխաւսելն զիտելի է, քանզի միապատիւ է աստուածականն եւ ոչ թէ բազմաբար» (84):

Ընդգծուած տողը պէտք է հասկանալ «միմեանց փոխարէն բարեխօսելը», ինչպէս թարգմանել է Մ. Աբեղեանը (էջ 124) եւ ծանօթագրել (ծան. 145):

բ) Ընդ+տրական

Ընդ նախդիրը, ինչպէս յայտնի է, սեռական եւ տրական հոլովների հետ ունի սահմանափակ գործածութիւն, այն տրականի հետ սովորաբար դրուած է եզակի թուում, մինչդեռ Կորիւնի երկուս կան ընդ+եզակի եւ ընդ+յոգանակի տրական գործածութիւններ՝ շարահիւսական մի քանի կիրառութիւնների դրսեւորմամբ:

1) Միասնութեան անուղղակի խնդիր

Ընդ+տրական վեց գործածութիւններից հինգը կազմել է միասնութեան անուղղակի խնդիր:

«Հասանէր առ իս հրաման առն միոյ... եւ ընդ նմին այլոց եւս քաջալերութիւն» (22):

«Որ նահատակեցաւ ընդ Ղեւոնդեանցն<sup>16</sup>» (22):

«Չորս եւ մեր համարէն աղաչեալ երկախառնել ընդ մեզ աղաւթիւք» (24):

«Վարդապետին զտարեալսն ընդ իր յերկուս բաժանեալ» (46):

«Առնոյր ընդ իր զոմանս լաւագոնյս յաշակերտաց իւրոց» (62):

2) Սահմանափակման անուղղակի խնդիր

Կորիւնի երկուս կայ այսպիսի մի նախադասութիւն. «Բայց մի՛ ոք յանդհնագոյն վասն ասացելոցն զմեզ համարեցի, թէ զհարզ վայր մի խոնարհագոյն ընդ մեծին Մովսէսի, ընդ աստուածախաւսին, սքանչելագործին նմանեցուցեալ հաւասարեաց, որով թերեւս ստգտանիցեմք» (52):

Այստեղ առկայ է ընդ տրականով կազմուած բացայայտեալ՝ բացայայտիչ կապակցութիւն, ընդ որում՝ «ընդ ... Մովսէսի» բացայայտեալն ունի երկու բացայայտիչներ (ընդ աստուածախաւսին, սքանչելագործին), սակայն վերջինիս վրայ ընդ նախդիրը չի կրկնուել ոճական նկատուածով, մի երեւոյթ, որը տարածուած է գրաբարում, չնայած որոշ բնագրերում կան հակառակն ապացուցող այլ օրինակներ: Այստեղ բացայայտեալը սահմանափակման անուղղակի խնդիր է: Այն կարելի է մեկնաբանել նաեւ յանգման անուղղակի խնդիր՝ մէկին նմանեցնել մէկ այլ անձնաւորութեան:

Մ. Աբեղեանն այս նախադասութիւնը ճշգրտօրէն թարգմանել է. «Բայց ոչ ոք թող մեզ յանդուգն չհամարի ասածներիս համար, թէ ինչպէս մի շատ խոնարհ մարդու նմանեցնելով՝ հաւասարեցրեց մեծ

16 Դասական գրաբարով պէտք է լինի ընդ Ղեւոնդեանցն, ընդ+հայցական (ՀԱ-ի խմբագրութիւն):

Մովսէսին, աստուածախօսին, սքանչելագործին, որով թերեւս մեղադրուենք» (101):

գ) Ընդ+հայցական

Սովորաբար ընդ նախդիրն ամէնից շատ գործածուած է հայցական հոլովի հետ՝ արտայայտելով բազմազան նշանակութիւններ, սակայն Կորինթի երկուստայն հոլովի հետ ունի ընդամէնը 10 գործածութիւն՝ իմաստային մի քանի դրսեւորմամբ:

1) Դադարման տեղ

Այսպիսի չորս օրինակ կայ:

«Ընդ ամենայն տեղիս Վրաց կարգեալ զգործ աստուծապաշտութեան» (64):

«Ընդ ամենայն տեղիս լի առնէր զսուրբ Աւետարան տեառն» (64):

«Ելէք ընդ ամենայն ազգս» (56):

«Քարոզեսցի աւետարանս ընդ ամենայն տիեզերս» (56):

Վերջին երկու նախադասութիւնները քաղուած են Մատթէոսի Աւետարանից (Մատթ. ԻԸ 19, ԻԴ 14): Ըստ որում՝ երկրորդը Կորինթն Աւետարանից քաղել է նոյնութեամբ, իսկ առաջինը ներկայացուած է ոչ բառացի:

Աւետարանում գրուած է. «Գնացէք այսուհետեւ, աշակերտեցէք զամենայն հեթանոսս», (Մատթ. ԻԸ 19):

Գրեթէ նոյնութեամբ համընկնում են Կորինթի (56) եւ Ազաթանգեղոսի (470) աշխատութիւնների որոշ հատուածներ, այդ թւում նաեւ՝ «ելէք ընդ ամենայն ազգս» նախադասութիւնը, որը, ըստ այս մատենագիրների, քաղուած է Աստուածաշնչից: Սակայն բնագիր կազմողները յիշատակում են Մատթ. ԻԸ 19, որտեղ այս նախադասութիւնը բառացիօրէն չի համապատասխանում քաղուածքին: Եւ քանի որ նախնային բայը բազմիմաստ է (ՆՀԲ, Ա, էջ 649) այս բայի մօտ ընդ+հայցական կառուցող ուղեւորում չի արտայայտում, այլ

նշում է տեղային յարաբերութիւն, ինչպիսին է՝

«Ելէ՛ք ընդ ամենայն աշխարհս» (Ագ., 342-348):

Ազաթանգեղոսի գրքում «Ելէ՛ք ընդ ամենայն հեթանոսս» (370) եւ Ազաթանգեղոսի ու Կորինթի երկերում «Ելէ՛ք ընդ ամենայն ազգս» (56) նախադասութիւնը նշանակում է «Ելէ՛ք բոլոր ազգերի մէջ»:

Ստուգումը ցոյց տուեց, որ ընդ նախդիրը ելանել բայի մօտ ուղեւորման հայցականի դրսեւորման համար չի դրուել անձերի եւ անձ ցոյց տուող առարկաների հայցական հոլովների հետ. Ազաթանգեղոսի, Բուզանդի, Եզնիկի, Եղիշէի, Խորենացու եւ Փարպեցու գրքերում նման օրինակի չենք հանդիպել:

Կորինթը ընդ+հայցական կապակցութեամբ կազմել է սեղմ, սակայն նոյնիմաստ նախադասութիւն: Եւ սա եզակի փոփոխութիւն է, որ գտնուում ենք Կորինթի գրքում:

2) Ուղեւորման տեղ

Այն կիրառուած է սահմանափակ: «Բազում թուղթս խրատագիրս եւ զգուշացուցիչս ընդ ամենայն գաւառս առաքէր» (92):

3) Հաղորդման անուղղակի խնդիր

«Իսկ արդ եթէ թեթեւագոյն արուեստից՝ պակասագոյն են ի գիտութենէ ազգք երկրածնացս, ո՛րչափ եւս այնմ արուեստի ոք համարեսցի եւ անգիտանալ՝ որ ընդ Աստուած զիօսսն կատարէ» (84):

Թարգմ.՝ «...որ Աստծոյ հետ է խօսում»:

4) Ուղղութեան անուղղակի խնդիր

«Եւ մինչդեռ ձեռք սրբոյն ընդ երկինս կարկառեալ էին, տեսիլ սքանչելի խաչանման լուսաւոր շողաւոր ձեւ երեւէր ի վերայ ապարանիցն, յորում երանելին վախճանէր» (92):

5) Ժամանակի պարագայ

Գրաբարում սովորաբար ժամանակի գաղափար դրսեւորելու համար ընդ նախդիրը դրուում է անորոշ դերբայի հայցական հոլովի հետ, սակայն Սուրբ Գրքում եւ այլ բնագրերում կան օրինակներ, երբ ընդ նախդիրը սոյն իմաստը դրսեւորելու համար դրուում է նաեւ ժամանակ ցոյց տուող բառերի հայցական հոլովի հետ: Օրինակ՝

«Եւ ընդ այգն ընդ առաւառն՝ յարուցեալ՝ ել եւ գնաց յանապատ տեղի» (Մարկ., Ա 35):

Նոյնպիսի երկու օրինակ կայ Կորինթի գրքում:

«...յետ սակաւ ինչ աւուրց ընդ տիւ եւ ընդ գիշեր ի Տարօն հասուցանէին» (88):

Այս օրինակը բերուած է Վ. Քոսեանի գրքում՝ (էջ 228), որպէս ապացոյց այն բանի, որ երբեմն ընդ+հայցական կառուցը համատեղում է ժամանակի եւ ժամանակի չափի իմաստներ: Մ. Աբեղեանն իրաւացիօրէն այն թարգմանել է. «Օր ու գիշեր [գնալով] հասցրին Տարօն» (137): Նոյնպիսի վերաբերող մասում, այսպիսին է.

Ջորս ընդ ժամանակս ժամանակս իւրով իսկ անձամբն օրինակ ցուցանէր (80):

Ընդ ժամանակս ժամանակս ոչ միայն ժամանակի հասկացողութիւն է արտայայտում, այլեւ դրսեւորում է ժամանակային յաջորդականութեան գաղափար՝ ժամանակ առ ժամանակ: Ընդ նախդիրը նոյնարմատ կրկնակ յարադրութիւններում չի կրկնուել:

դ) Ընդ+գործիական

Կորինթի երկում ընդ նախդիրը բացառական հոլովի հետ չի գործածուել, իսկ գործիական հոլովով կայ ընդամէնը մէկ գործածութիւն՝ ենթարկուածութեան տեղային իմաստի դրսեւորմամբ:

«...խորհուրդ առնէր այնուհետեւ վասն կէս ազգին Հայոց, որ էր ընդ իշխանութեամբ թագաւորին Հոռոմոց» (64):

Ընդ նախդիրով կազմուել են նաեւ յարադրութիւններ՝ ընդ առաջ ելանել, ընդ առաջ լինել, ընդ մէջ անցնել:

Ե. ԸՍՏ ՆԱԽԴԻՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ

Ըստ նախդիրը, որը գրաբարում սովորաբար գործածուած է տրական, հայցական, ինչպէս նաեւ ոչ յաճախ՝ բացառական հոլովների հետ, Կորինթի երկում 28 անգամ կիրառուել է միայն տրական հոլովի հետ՝ դրսեւորելով համաձայն, մասն իմաստներ, որոնք կարելի է թարգմանել նաեւ գործիական հոլովով: Շարահիւսական առումով դրանք գլխաւորապէս արտայայտում են համապատասխանութեան խնդրային իմաստ, չնայած դրանց մի մասը կարող է մեկնաբանուել նաեւ հիմնուքի եւ ձեռի պարագայական իմաստներով:

Նշենք մի քանի օրինակ.

«Դարձեալ փութայ ամենեքումք հանդերձ ըստ Քրիստոսի հետոցն վարել» (34):

Թարգմ.՝ «...ջանում է Քրիստոսի օրինակով կեանք վարել» (83), (ձեւի պարագայ):

«...ըստ արիմակի գրելոցս առ ի մէնջ հարքն ի կատարումն դարձան» (96):

Թարգմ.՝ «մեր գրածի համեմատ»:

«Առնոյր կարգեալ նշանագիրս վրացերէն լեզուին, ըստ շնորհելոյն նմա ի Տեառնէ» (62) (համաձայն, համապատասխան):

«Ձեռն ի գործ արկանէր ի թարգմանել... մեծն Իսահակ՝ ըստ յառաջագոյն սովորութեան» (74):

«Եւ յետ այնորիկ ըստ աւետարանական չափոցն՝ ի ծառայութիւն Աստուծոյ... դարձեալ» (38):

Թարգմ.՝ «Եւ դրանից յետոյ նա ըստ աւետարանական կանոնի՝ դարձաւ մարդասէր Աստծոյ ծառայութեանը» (87) (համաձայն Հիմունքի պարագայ):

«Բարեպաշտութեամբ սպասաւորէր ըստ աշակերտաց հաւատոցն Քրիստոսի» (40) (ձեւի պարագայ):

Ինչպէս «Վարք Մաշտոցի» գրքի 1941 թ. հրատարակուած բնագրում (40), այնպէս էլ ՆՀԲ-ում (Հտ. Ա, էջ 257) աշակերտ գլխաբառի համար վկայուած է Կորինթի գրքից նոյն տողը՝ «ըստ աշակերտաց հաւատոցն Քրիստոսի»: Սակայն երկու ձառնարկներում, որտեղ կան Կորինթի գրքից հատուածներ, գրուած է՝ «բարեպաշտութեամբ սպասաւորէր, ըստ աշակերտական հաւատոց ի Քրիստոս» (Հմմտ. 1941 թ. հրատ., էջ 40, ծան. 6, ինչպէս նաեւ՝ «Մատենագիրք Հայոց», Հտ. Ա, Ե դար, էջ 234, 258): Ուշագրաւ է, որ այս տողը նոյնութեամբ կայ նաեւ Ազաթանգեղոսի «Պատմութիւն Հայոց»-ի համապատասխան հատուածում (տե՛ս ՆՀԲ, Հտ. Ա, էջ 258):

Ըստ այս վերջին տարբերակի՝ առկայ է ըստ... հաւատոց կապակցութիւնը, մինչդեռ, ըստ առաջին տարբերակի, Մ. Աբեղեանը Թարգմանել է. «Սպասարկում էր [նրան], Քրիստոսի հաւատքի աշակերտների [կարգի] համաձայն (Կորինթ, Վարք Մաշտոցի, 1980, էջ 88): Այս դէպքում՝ ըստ աշակերտաց...»

Ո՞րն է ճիշտ: Կարելի է վիճարկել մէկն ունեւէկը, սակայն փաստ է, որ այստեղ կայ ըստ+տրական կապակցութիւնը՝ համաձայն իմաստի դրսեւորմամբ՝ ըստ ... հաւատոց:

2. Ի ՆԱԽԴԻՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ

Ի նախդիրը Կորինթի երկու գործածուել է 397 անգամ, որը կազմում է գրքում եղած ընդհանուր նախդրագործածութեան 44,49%-ը: Միաժամանակ յայտնի է, որ 5-րդ դարում ի նախդիրի համե-

մատ գերիշխում է զ նախդիրի գործածութիւնը, մինչդեռ «Վարք Մաշտոցի» գրքում այս նախդիրների կիրառութիւնները գրեթէ հաւասար են. զ նախդիրը գործածուել է 393, ի նախդիրը՝ 397 անգամ:

Որպէսզի պատկերը պարզ դառնայ, նշենք, որ 5-րդ դարում Կորինթի, Եզնիկի, Եղիշէի եւ Խորենացու երկերում ընդհանուր նախդրագործածութիւնը 20626 է, զ Գախիիրը գործածուել է 10205 անգամ, կամ նախդիրների ընդհանուր գործածութեան 49,47%-ը, ի նախդիրը՝ 8147 անգամ, կամ 39,49%-ը, այսինքն՝ զ Գախիիրը նշուած մատենագիրների երկերում ի Գախիիրի համեմատ գործածուել է 9,98%-ով աւել յաճախականութեամբ:

Կայ նաեւ այսպիսի մի տարբերութիւն: Առ ի զոյգ նախդրային գործածութիւնը 5-րդ դարում հանդիպում է յատկապէս հայցական հոլովում (Եզնիկ՝ 7, Եղիշէ՝ 10, Խորենացի՝ 18 անգամ):

Կորինթի երկում առ ի զոյգ նախդիրները գործածուել են հայցական հոլովի հետ 7 անգամ, տրական հոլովի հետ՝ 1, բացառականի հետ՝ 13 անգամ: Նման կիրառութիւններ կան եւ այլ աղբիւրներում:

Այժմ ներկայացնենք Կորինթի երկում ի նախդիրի միջոցով իմաստային դրսեւորումները՝ շարահիւսական համապատասխան կիրառմամբ:

- ա) Ի+տրական (միայն եզակի)
  - Ի նախդիրը գործածուել է միայն եզակի տրական հոլովի հետ 62 եւ առ ի կապակցութեամբ՝ 1 անգամ, կազմել են շարահիւսական համապատասխան պաշտօններ, որպիսիք են յատկապէս դադարման տեղի եւ ժամանակի պարագաները:

- 1) Դադարման տեղ
  - Այսպիսի պարագայ են պահանջել մի շարք տարաբնոյթ բայեր՝ բխել, դեզերել, ընծայեցուցանել, մեծարել, անել եւ այլն:

«ՅԱյրարատեան գաւառիմ... բխեցին Հայոց շնորհք պատուիրանաց Աստուծոյ» (58):

«Հրամայեալ լինէր ... ի տիեզերական քաղաքիմ մեծարել» (66):

«Մատուցեալ յարէն յեզնիկն ... ի Կոստանդինական քաղաքիմ» (74):

Մի քանի անգամ արտայայտուել է նաեւ վրայ տեղային իմաստը:

«Ի Թաբալական լեռիմն՝ զաւետեաց երանութիւնն տայր» (82):

Պէտք է ասել նաեւ, որ յաճախ տեղի պարագան եւ սահմանափակման անուղակի խնդիրը նոյնիսկ դժուար են սահմանադատուում, քանի որ կարող են դրսեւորել ե՛ւ այս, ե՛ւ այն իմաստները:

«Նորա ... պատուիրեալ կալ ի ճշմարտութեանն» (72):

- 2) Ժամանակի պարագայ
  - Ի նախդիրը, դրուելով ժամանակ ցոյց տուող որեւէ բառի տրական հոլովի վրայ, կազմում է ժամանակի պարագայ՝ ներգոյական հոլովի կազմութեամբ:

«Երբ եւ յորում ժամանակի մատակարարեցաւ» (22):

«Վասն որոյ առեալ երանելոյն Մաշթոցի դաս մի մանկտոյ Հրամանաւ արքայի եւ միաբանութեամբ սրբոյն Սահակայ, եւ Հրաժարեալք ի միմեանց համբուրիւ սրբութեանն՝ խաղայր գնայր ի հինգերորդ ամի Վաւազայոյ արքային Հայոց» (46):

«Հասանէր սրբոյն քրիստոսակոչ կատարումն ... լերեքտասաներորդում ամսեանն Մեհեկանի» (92):

- բ) Ի+հայցական
  - Ի նախդիրը, ինչպէս ասուեց, հայցական հոլովի հետ գործածուել է 183 անգամ, ինչպէս նաեւ 7 անգամ առ ի յարդրութեամբ: Այս հոլովում արդէն զգացուում է զ նախդիրի գործածութեան յաճախակա-

նութեան գերազանցութիւնը. զ նախդիր՝ 370 անգամ, ի նախդիր՝ 190 անգամ:

- 1) Յանգաման անուղակի խնդիր
  - Այսպիսի խնդիր են վերցրել դառնալ, հասանել, հատուցանել, մատուցանել, յարեցուցանել, անխանել եւ այլ բայեր:

«Ապա ելանէր նոցա պարգեւական յամենաբարին Աստուծոյ ժողովել զաշխարհահոգ խորհուրդն երանելի միաբանելոցն, եւ ի գիտ նշանագրաց Հայաստան ազգին հասանել» (42):

«...ջանայր... հասուցանել ի գիտութիւն ճշմարտութեան» (58):

«...եւ զհաճոյական աղաթս հասուցեալ ի Քրիստոս՝ հանգեալ» (94):

«...դէպ լինէր ոմանց եղբարց ի Հայաստան աշխարհէս... որ եւ Ղեւոնդէս առաջնոյն անուն էր, եւ երկրորդն՝ Կորինես. եւ մատուցեալ յարէին յԵզնիկն» (74):

«Եւ գտեալ եւս զոմանս՝ յինքն յարեցուցանէր» (38):

- 2) Մատուցման անուղակի խնդիր
  - Մատուցման անուղակի խնդիր են կազմել աւանդել եւ տալ՝ յանձնելու իմաստով բայերը:

«Հանդերձ աստուածահաճոյ աղաթիւք ծերունւոյն ի Քրիստոս աւանդեալ» (88):

Ձեզնուած է հոգիմ, քանի որ այս նախադասութիւնը Թարգմանուում է՝ «ծերունին ... [հոգին] Քրիստոսին աւանդեց»:

«...հրաման տայր... արքայն Վրաց... ժողովել մանկունս եւ տալ ի ձեռն վարդապետին» (62):

- 3) Վերածման անուղակի խնդիր
  - Բաժանել եւ դարձուցանել բայերի պահանջով կազմուել է վերածման անուղակի խնդիր:
  - Վարդապետին զտարեալսն ընդ իւր լերկուս բաժանեալ (46):

«Իսկ երանելոյն Սահակայ զեկեղեցական գրոց դուժարութիւնն՝ կանխաւ ի յունական բարբառոյն ի հայերէն դարձուցեալ» (76):

4) Ուղղութեան անուղղակի խնդիր

Նման խնդիր է վերջրել հայել բայը:

«Երանելոյն հայեցեալ ի շնորհացն բարձրութիւն» (30):

«Հայեցարո՛ւք, ասէ, ի գաւրագուխն հաւատոց, եւ ի կատարիչն Քրիստոս» (էջ 34, եբբ., ԺԲ 2):

«...հայեցեալ յելս գնացից նոցա, նմանաւք եղերուք հաւատոցն» (էջ 34, եբբ., ԺԳ 7):

5) Տեղի պարագայ

Կորիւնի գրքում շատ են գործածուած ի+հայցական հոլով կառոյցով ուղեւորման եւ դադարման տեղի պարագաներ:

ա. Ուղեւորման տեղ

Ուղեւորման տեղ (ուղեւորման հայցական) են պահանջել մի տեղից մէկ այլ տեղ տեղափոխութիւն ցոյց տուող մի քանի բայեր՝ անցանել գնալ, գնալ իջանել, դառնալ, երթալ իջանել, ելանել, բառնալ, յուղարկել, տանել...

«...ի սահմանակիցս ի Սիւնական աշխարհն ելանէր» (60):

«...յարուցեալ գնայր իջանել ի կողմանս վրաց» (62):

«...նորա... տարեալ ի քաղաքն Մելիտինացոց» (66):

«...յուզարկել ի կողմանս Ասորոց» (74):

բ. Դադարման տեղ

Դադարման տեղի պարագայ է կազմուած այնպիսի բայերի պահանջով, ինչպիսիք են՝ գրել, բնակել, բնակեցուցանել, մտանել, միջամուխ լինել, սերմանել, անկանել, գումարել, առնուլ (առեալ... ի բազուկս), կարգել, լինել, փոխել եւ այլն:

Ինչպէս նկատելի է, ի (1) նախդիրը հոլովուող բառերի յոգնակի թուի հայցականի հետ դրսեւորում է ներգոյական հոլովի իմաստ, սակայն ո եւ ա վերջադրական հոլովման բառերի դէպքում, բացառութեամբ տրականում ոչ եւ ում հոլովակերտ մասնիկներ ունեցող բառերի, ներգոյականի իմաստը կազմուել է նաեւ եզակի հայցականից: Սովորաբար յատուկ անունների ներգոյականը կազմուում է եզակի հայցականից, որպիսին միայն մէկ-երկու օրինակ է տրուած Կորիւնի երկում.

«...զոմանց զբնական զիմաստութիւն գովեալ աստուածեղէն իմաստութեամբն հանդերձ, որպէս զՅովսէփայն յՆգիպտոս, եւ զԴանիէլին ի Բաբելոն» (26):

Այսպէս պէտք է կազմուէր նաեւ եւս դերանունան եզակի ներգոյականի իմաստը՝ յիս, սակայն Կորիւնի գրքում կայ միայն մէկ օրինակ, այն էլ քաղուած Աստուածաշնչից. «Լաւ եւս լիցի պարծել տկարութեամբս, զի բնակեսցի յիս զաւրութիւնն Քրիստոսի» (էջ 80, Բ Կոր., ԺԲ 9):

Յոգնակի ներգոյականով կան բաւականին շատ գործածութիւններ:

«Կարգէր յամենայն գիղս գաւառին դասս սրբոց վանականաց» (60):

«Ձորմէ իսկոյն պատմէին յարքունիսն» (66):

«Որք ի լերինս եւ յանապատս եւ ի փապարս վիմաց՝ զաստուածեղէն կրանիցն զծառայութիւն հարկանէին» (84):

Ի նախդիրը չի կրկնուել նոյնարմատ կրկնակ յարադրութիւնների դէպքում:

«...սկսան... գումարել ի կողմանս ի գաւառս, ի տեղիս տեղիս Հայաստան ազգիս...» (58):

6) Ժամանակի պարագայ

«Վարք Մաշտոցի» գրքում ի+հայցական կառոյցով ժամանակի պարագայով նախադասութիւնները քաղուած են ե՛լ

Աստուածաշնչից, ե՛լ կազմուած են հեղինակի կողմից:

«Լաւ է յամենայն ժամ նախանձել ի բարիս» (32), (Գաղ., Դ 18):

Հեղինակային կազմութիւններ են՝

«Ոչ այնպէս մեծն Մովսէս զուարճանայր յէջս Սինէական լերինն» (52):

«Ի մանկութեան տիսն վարժեալ հելլենական դպրութեամբ, եկեալ հասեալ ի դուռն Արշակունեաց թագաւորաց Հայոց Մեծաց» (36):

«...յաւուրս բաղարջակերացն յաւրինական տաւնին՝ զգիշերոյն աղաւթքն... առանձինն մատուցանէր...» (82) եւ այլն:

Մի անգամ գործածուել է մինչ ի (նախադրութիւն+նախդիր) կապակցութիւնը՝ (մինչ ի վախճան), դրսեւորելով ժամանակի պարագայի իմաստ.

«...ծառայեալ ըստ Աւետարանին վայելչութեան, մինչ ի վախճան զհրամայեալսն ի գործ բերէր» (62):

7) Նպատակի պարագայ

Ի+հայցական կառոյցը սովորաբար նպատակի պարագայ է կազմում անորոշ դերբայի, բայական ծագում ունեցող գոյական անունների եւ ընդհանրապէս իմաստով գործողութեան հետ կապուած այլ բառերի հետ: Կորիւնի երկում կան այս բնորոշմանը համընկնող օրինակներ:

«Եւ զայս ամենայն աւետարանեալ ոչ ի պարծանս գովութեան, այլ զի օրինակ եւ կանոն զկնի եկելոցն պաշտիցի» (32):

«Ի ձեռն առեալ... զաւետարանական արուեստն՝ ի թարգմանել, ի գրել եւ յուսուցանել» (54):

«Թոճիկս կարգել ի դարմանս» (70):

«Ձեռն ի գործ արկանէր ի թարգմանել եւ ի գրել մեծն Իսահակ» (74):

«Անդ էր... պատրաստել զսիրտս երգովք հոգեւորաւք, ի փառս եւ ի գովութիւն Աստուծոյ» (82):

Է. Յ ՆԱԽԴԻՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ

Ինչպէս ամբողջ գրաբարում, այնպէս էլ «Վարք Մաշտոցի» երկում ց նախդիրը միայն հայցական հոլովի հետ է գործածուել եւ այն էլ շատ սահմանափակ (վերջինում՝ ընդամէնը 4 անգամ), մէկը հաղորդման յարաբերութեան դրսեւորմամբ («ասէր ցոմն այսպէս», էջ 28), երեքը՝ մինչեւ ց յարադրութեամբ՝ ժամանակի պարագայի դրսեւորմամբ:

«Մինչեւ ցայսօր ժամանակի նովին սովորութեամբ վարին» (34):

«Ի դպրութենէն Հայոց մինչեւ ցվախճան սրբոյն ամք երեսուն եւ հինգ» (93):

«Առնու համար ամաց... ի չորրորդումն ամէն Կրմանայ արքայի մինչեւ ցառաջին ամն երկրորդ Յագկերտի» (100):

IV. ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Գրաբարի բոլոր նախդիրները (առ. գ. ընդ, ըստ, ի (1), ց) գործածուել են Կորիւնի «Վարք Մաշտոցի» երկում՝ գրաբարում գործող կանոնների համաձայն: Տարբերութիւնները հիմնականում դրսեւորուել են ըստ հոլովների եւ ըստ շարահիւսական կիրառութիւնների յաճախականութեան: Ինչպէս նաեւ իմաստային դրսեւորումների առումներով: Օրինակ՝ 5-րդ դարի մատուցանալութիւնում, ըստ յաճախականութեան, ի նախդիր համեմատութեամբ գերիշխում է գ նախդիրը, մինչդեռ Կորիւնի երկում նրանք գրեթէ հաւասար են:

2. Կորիւնի «Վարք Մաշտոցի» աշխատութիւնն ինչպէս լեզուատուական, այնպէս էլ նախդրագործածութեան առումներով սերտօրէն առնչուում է Աստուածաշնչին. որից ուղղակի եւ անուղղակի կատարուած են մէջբերումներ, կան յղումներ: Ըստ որում Կորիւնը տեղ-տեղ ձգտել է կանոնիկ զարձնել նախդրագործածութիւնը: Օրինակ՝ առ+ուղեւորման հայցականով գործածուել է միայն անձերի, իսկ ի ընդ՝ իրերի

դէպքում, մինչդեռ մեր մատենագրութիւնում որոշ շեղումներ կան: Կորիւնը երբեմն դիմել է զ եւ ի նախդիրների յաւելադիր կիրառութիւնների, ըստ նախդիրը գործածել է միայն տրական հոլովի հետ եւ այլն:

3. Առանց նախդրագործածութեան հանգամանալից ուսումնասիրման եւ առանց հեղինակի դրսեւորած իւրայատկութիւնների բացայայտման դժուար ընկալելի կը լինեն Կորիւնի երկում նոյնիսկ առանձին հատուածներ՝ թէկուզ եւ այն ա-

ռումով, որ Կորիւնը յաճախ գրել է ոչ պարզորոշ, խրթնաբան լեզուով ու ոճով:

4. Մեր ուսումնասիրութիւնը, լինելով այս առումով առաջինը, անշուշտ, ունի իր առաւելութիւններն ու թերութիւնները, բայց տողերիս հեղինակը ձգտել է խորամուխ լինել քննուող հարցի մանրամասնների մէջ՝ նկատի առնելով այս հարցում հայագիտութեան ձեռքբերումները, ինչպէս նաեւ մեծանուն հայագէտ Մանուկ Աբեղեանի կազմած բնագրի եւ աշխարհաբար թարգմանութեան բացայայտումները<sup>17</sup>:

17 Սոյն ուսումնասիրութեան մեքենագիր տարբերակի վերաբերեալ արժեքատր դիտողութիւններ է արել Հայր Պօղոս Գոճաճեանը, որին շնորհակալ ենք:

ՀԱՅԿԱԿԱՆ ՁԵՌԱԳՐԱԿԱՆ ՀԱԻԱԲԱԾՈՆԵՐ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ ԵՒ ԵՂԻՇԷԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԻ ՆՈՐ ՊԱՏԱՌԻԿ

Պարոյր Սուրադեան

Հայոց միջնադարեան ձեռագիր յուշարձանները ուղեկցել են ազգային գաղթականութեանը եւ աստիճանական կուտակումներ տուել այնտեղ, ուր հանգրուանել է Հայրենի միջավայրից պոկուած տուեալ զանգուածը: Համաքաղութեան այս պարագան երկու հիմնական դրոշմներով է թելադրուած. նախ՝ ձեռագիր նիւթերն անհրաժեշտ էին արարողական առանձին պէտքերին գոհացում տալու համար, ապա նաեւ՝ նրանք կոչուած էին պահպանելու Հայրենի հոգեւոր միջավայրի զգացողութիւնը, դաւանական պատկանելութիւնը:

Երբ Ղրիմի Հայութիւնը տեղափոխուեց էր Դոնի Ռոստովի շրջակայք, ճանապարհին անլուր զրկանքներ՝ կրող ընտանիքներն ու հոգեւոր պետերը, այդ թւում եւ վանական միաբանութիւնները, իրենց հետ բերում էին Հարիւրամեակների ընթացքում Ղրիմի վանքերում ու բնակավայրերում կուտակուած կամ տեղում ընդօրինակուած նշանակալի քանակութեամբ ձեռագրեր: «Լուծայ» հանդէսի 1902 թ. 2-րդ (էջ 175-195) եւ 3-րդ (էջ 210-256) համարներում տպագրուած Ե. Շահազիզի «Նոր Նախիջեւանի ձեռագրերը» մեզանում անհասկանալիօրէն աննկատ մնացած յօդուածում, տեղի Ս. Լուսաւորիչ Աւագ եկեղեցում եւ այլ եկեղեցիներում ու անհատների մօտ պահպանուող ձեռագրերի թիւը հասնում է 196 միաւորի (էջ 182), իսկ մէկ այլ ցուցակում՝ 226-ի: Եթէ սրանց գումարենք նորահաստատ գիւղերում եղած ձեռագրերը, ապա այդ թիւը կը հասնի 325-ի (էջ 222): Ձեռագրական այդ հաւ. ածոյի մէջ է եւ «Քալէշահիննց»

տոհմանունով կոչուած Յայսմաւուրը՝ Ղրիմի Հայոց գաղթականութեան պատմութեանը վերաբերող նիւթերով: Ձեռագրական այս պատկանելի հաւաքածոն 1845 թ. գրաւել է ազգային եկեղեցական ու մշակութային նշանաւոր գործիչ Ներսէս Աշտարակեցու ուշադրութիւնը, որի պահանջով կազմուել է ցուցակ: Այս ձեռագրերով հետաքրքրուել է 1886 թուականին էջմիածնից տուն վերադարձող Կոնիքիբը:

Ափսոսանքով պիտի արձանագրել, որ Ղրիմի եւ Նոր Նախիջեւանի Հայութեան պատմութիւնը մենագրօրէն ուսումնասիրող մեր պատմաբանները հետամուտ չեն եղել ձեռագրերի բովանդակած նիւթերն ու նրանց հետագայ ճակատագիրը ճանաչելուն: Նրանցից քանի՞սն է պահպանուել եւ ձեռագրական ի՞նչ հաւաքածոյի մաս կազմել: Ե. Շահազիզի յօդուածը պատշաճ հետաքրքրութիւն պիտի առաջացնէր նաեւ ձեռագրական հաւաքածոներով զբաղուող գիտնականների շրջանում, որ դարձեալ անկատար է մնացել:

Եթէ հաւաքածոյի գոյացման վաղեմութիւնը պատկանում է Ղրիմ-Նոր Նախիջեւանի ձեռագրերին, ապա Ռուսաստանի տարածքում եղած հայկական մեծագոյն հաւաքածոն Սանկտ Պետերբուրգի մշակութային-գիտական կենտրոններում հաւաքուած ձեռագրերն են կազմում՝ 472 միաւոր: Նրանք տեղաբաշխուած են հետեւեալ հաստատութիւններում.

1. Ռուսաստանեան ազգային գրադարան

- 26 Ա. Այտընեան, *Քննական քերականություն արդի հայերէն լեզուի*, Վիեննա, 1866, էջ 67:
- 27 Լ. Տէր-Պետրոսեան, *Հայ հին թարգմանական գրականություն*, Եր. 1984, էջ 10:
- 28 Հարցը աւելի խորութեամբ է քննուած հեղինակի դոկտորական ատենախօսութեան մէջ, որին ժամանակին հնարատրութիւն ենք ունեցել ծանօթանալու:

- 29 Եւսեբիոս Եմեսացի. *Մեկնությունը*, Վենետիկ, 1980, էջ 81: Այս գործը Աստուածաշնչի լատինացում է իր տեսակի մէջ ուրոյն մեկնություն է՝ ընտրովի հատուածների մեկնություն: Գործը հայերէն է թարգմանուել 5-րդ դարի առաջին կէսին, այսինքն՝ դասական (ոսկեդարեան) թարգմանություն է:

### ՀԱՅՈՑ ՏԱՌԱՋԵԻԵՐԸ ՏԱՌԱԲԱՆՈՒԹԵԱՆ՝ ՏԵՍԱԿԷՏԻՑ

Ուրբէն Յակոբեան (Թարումեան)

*Նստիստով է հայոց գրի Մշտչրոցեան յարեփոխակս 1600-ամեակին*

Գիրը մարդու խօսքը երկրաչափական նշանների միջոցով ամրակայելու եւ տարածելու եղանակ է: Այն, որպէս տեղեկոյթի պահման եւ տարածման համակարգ, ենթադրում է տեղեկոյթի ստեղծող (գրող, հաղորդիչ) եւ տեղեկոյթի սպառող (ընթերցող, ընդունիչ), որոնք օգտուում են որոշակի կողային համակարգից՝ այբուբենից: Հաղորդակցուողները շահագրգռուած են չխախտել գրանշանների ձեւերը (կողը), այլապէս դրանք անճանաչելի, այսինքն՝ ոչ պիտանի կը դառնան:

Սակայն իր բնոյթով գիրը ենթակայ է աղաւաղումների, քանի որ գրանշաններն իրագործելիս դրանց ձեւը դժուար է վերահսկել: Իսկ որքան աւելի արագ է գրելու ընթացքը, այնքան աւելի շատ են սխալները, յատկապէս՝ անձնական առօրէական գրութիւններ կատարելիս: Գրի այս տեսակն ընդունուած է անուանել կենցաղային գիր: Հակառակ դրան՝ երբ գրանշանների տարրերը ոչ թէ գրուում են այլ՝ ակարում, տառերի ձեւերը հնարաւոր է դառնում պատկերել այնպէս, որ դրանք առաւելագոյն չափով համապատասխանեն տառի հանրաճանաչ կերպարին: Գրի այս տեսակն ընդունուած է անուանել կոթողային գիր: Սա գրի հիմնական, պաշտօնական տեսակն է, որը կիրառուում է տուեալ գրի (լեզուի) կրողների զգալի զանգուածներին ուղղուած կարեւոր գրութիւններ իրագործելիս<sup>2</sup>:

Գրի կոթողային իրագործումը հէնց այն օղակներից է, որոնք պաշտպանում են գրանշանների ձեւը տարաբնոյթ աղաւա-

ղումներից: Դրանցից է նաեւ ազգային գրչական դպրոցը, ուր դասաւանդուում են գրանշանների իրագործման եղանակները (վայելչագրութիւնը)՝ պաշտօնական, կոթողային գրի օրինակներով: Պատկերացնելու համար, թէ որքան արդիւնաւէտ է գործում տառաձեւերի պաշտպանման համակարգը, բաւական է համեմատել, օրինակ, ներկայիս լատինական գլխատառերի ձեւերը Տրայանոսի սեան Բ դարի արձանագրութեան տառաձեւերի կամ ներկայիս հայոց գլխատառերի ձեւերը Եղվարդի եկեղեցու Ձ. դարի արձանագրութեան տառաձեւերի հետ. նոյնիսկ հազարամեակների ընթացքում տառաձեւերը կարող են մնալ անփոփոխ:

Բայց կայ մի ուշագրաւ երեւոյթ. քանի որ իւրաքանչիւր հաղորդակցուող շահագրգռուած է ապահովել գրանշանների ընթեռնելիութիւնը, շատերը փորձում են հաղորդել իրենց գրածին առաւել հանդիսաւոր (կոթողային) տեսք. իրենց ձեռագրին բնորոշ որոշ կոր գծերը ուղղուում են, մեծ կորութիւն ունեցող հատուածները փոխարինուում են անկիւններով, անկանոն կորերը՝ կարկինային կորերով եւ այլն: Տեղի է ունենում կենցաղային տառաձեւերի (աւելի ճիշտ՝ տառաձեւերի մասին կենցաղային, անձնական պատկերացումների) կոթողայնացում: Գրանշանի կոթողային ձեւի հետ կապ չունեցող յաւելեալ մասնիկները առանձին անհատներ մեկնաբանում են իւրովի՝ վերաիմաստաւորելով դրանք: Ապա նրանք ներառում են իրենց վերաիմաստաւորած մասնիկները իրենց կողմից իրագործուող կոթողային բնոյթի գրու-

Թիւններում՝ ստեղծելով վայելչագրական նոր ավանդույթներ:

Այսպէս, արդէն մեր օրերում տառատեսակների որոշ ձեւաւորողներ ընկալեցին հայկական Շ գրանշանը եւրոպական Շ գրանշանի սկզբունքով ստեղծուած, այսինքն՝ որպէս C գրանշան՝ «Շ» (պսակ) տարբերիչ նշանով: Արդիւնքում «Շ»-ն սկսեցին երբեմն պատկերել երկու առանձին մասերից բաղկացած (վերին գծիկի եւ ստորին կիսակլորի): Կարող են դիտուել «ժողովրդական ստուգաբանութեան» եւ այլ օրինակներ: Այսպէս, արագագրութեան ընթացքում գոյացող գրչի պատահական հետքերը (կապակցող գծերը) կարող են ընկալուել որպէս գրանշանի բաղկացուցիչ մաս կամ, հակառակը, գրանշանի բաղկացուցիչ մասը կարող է ընկալուել որպէս կապակցող մասնիկ եւ գրանշանին հանդիսաւոր տեսք հաղորդելիս վերացուել:

Բերուած օրինակներից երեւում է, որ այս երեւոյթը չի կարող էապէս ազդել գրանշանների պաշտօնական ձեւի վրայ. չափազանց յուսալի են պաշտպանիչ համակարգերը: Սակայն այլ է լինում վիճակը, եթէ գրային համակարգը փոխառուում է: Այստեղ հնարաւոր է երկու դէպք.

ա. փոխառումը կատարուում է կենտրոնացուած եղանակով՝ հասարակութիւնը կառավարող գերագոյն մարմինների՝ աշխարհիկ եւ/կամ հոգեւոր իշխանութիւնների կողմից՝ իրենց խնդիրների՝ կառավարման եւ քարոզչութեան իրականացման համար,

բ. կատարուում է տարբերայնօրէն՝ առանձին անհատների շփումների արդիւնքում:


Առաջին դէպքում պաշտպանիչ համակարգերը կը շարունակեն գործել, քանի որ համազգային մի համակարգ ստանում է այն միւսից՝ «ձեռքից ձեռք»:

Սակայն եթէ որեւէ ժողովուրդ իւրացնի հարեւան ժողովրդի գիրը՝ անհատների մակարդակով, ապա կարող է փոխառուել տուեալ գրի արագագրական կենցաղային ձեւը: Հետագայում, եթէ այդ գիրը ստանայ պաշտօնական կարգավիճակ, անհրաժեշտութիւն կ'առաջանայ արագագրական, այսինքն՝ անկազմակերպ գրանշանների հաղորդել հանդիսաւորութիւն եւ կանոնաւոր ձեւ՝ կոթողայնացնել այն: Եւ ահա այս պահին «ժողովրդական ստուգաբանութեան» ազդեցութիւնը կարող է վճռորոշ լինել, քանի որ նոր գրի պաշտօնական ձեւը մշակողը՝ դիզայները, վայելչագիրը, չխորանալով տուեալ գրանշանների ծագումնաբանութեան մէջ, անխուսափելիօրէն իւրովի է ընկալելու դրանց կառուցուածքը, եւ դրանց կոթողայնացման արդիւնքում գոյանալու է նախօրինակից էապէս տարբերուող գրանշանների համակարգ:

**ԱՐԱԳԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՆՐԱ ՅԵՏԵԱՆԵՈՎ ԳՐԱՆՇԱՆՆԵՐԻ ԶԵՄՓՈՒՍԱՆ ՕՐԻՆԱԶՈՒԹԻՒՆՆԵՐԸ**

Գրելու արագութիւնը գրանշանների ձեւերն աղաւաղող, թերեւս, ամենահիմնական գործօնն է, քանի որ, եթէ գրողը դանդաղ աշխատի, ապա անկախ նրանից, թէ ինչ գործիքներով եւ ինչ կարգով է իրագործում գրանշանը, սկզբունքօրէն այն հնարաւոր է վերարտադրել գրեթէ անփոփոխ: Իսկ արագ գրելու դէպքում, երբ գրողը չի կարողանում վերահսկել գրչի շարժումները, կատարուում է հետեւեալը. գրելիս ձեռքն ազդում է գրչի վրայ տարածական բոլոր հնարաւոր ուղղութիւններով: Նախ՝ դա գրի հիմնական ուղղութիւնն է՝ հայկականում, եւրոպականներում՝ ձախից աջ, սեմականներում՝ աջից ձախ եւ այլն: Դրանից բացի առանձին տառերը իրագործելիս գրիչը ստանում է հիմնական ուղղութեանը ուղղահայեաց,

թեք կամ յետադարձ ազդակներ. այդ ուղղութիւնները որոշուում են գրչութեան դարձի կանոններով: Վերջապէս գրելու ընթացքը սկսելիս եւ աւարտելիս, մասնաւորապէս՝ տառա- կամ բառամիջեան բացատներ ստեղծելու համար, գրչին հաղորդուում են նաեւ գրելու մակերեւոյթին ուղղահայեաց, պոկող կամ սեղմող ազդակներ: Սրանք բոլորը գումարուում են մեխանիկայից յայտնի կանոններով՝ տալով այս կամ այն համազօրներ (resultant), որոնցով էլ որոշուում է գրչի շարժման ուղղութիւնն ու սեղմման ուժը:



Վերեւում բերուած է բազմաթիւ գրային համակարգերում գործածուող երկու պարզունակ նշանների՝ անկիւնակի եւ խաչի հնարաւոր ձեւափոխութիւնների մի քանի օրինակ, որոնք գոյանում են արագագրութեան արդիւնքում՝ գրչից (մատիտով, շիւղով) գրելիս: Անկիւնակի օրինակով փորձենք պատկերացնել այն երեւոյթները, որոնք յանգեցնում են դիտուող ձեւափոխութիւններին:



Կախուած դրա երկու՝ ուղղաձիգ եւ հորիզոնական մասնիկների կատարման ուղղութիւնից (պատկերուած են սլաքներով) եւ յաջորդականութիւնից (նշուած են թուերով), հնարաւոր է մի քանի տարբերակ: Դրանցից իւրաքանչիւրն առաջացնելու է ձեւափոխութեան խմբեր, որոնցից այստեղ բերուած են երկուսը (ենթադրուում է, որ գրելու ընթացքը սկսուում է հէնց այս գրանշանից):

Գրիչն իջնում է թղթի մակերեւոյթին Ա կէտում եւ ստանում է ազդակ՝ ներքեւից վերեւ:

Միեւնոյն ժամանակ գրողը մտադիր է քիչ յետոյ անցնել նաեւ յաջորդ գրանշանի կատարմանը, ուստի նրա ձեռքից գրիչն ակամայ ստանում է աննշան ազդակ նաեւ ձախից աջ: Արդիւնքում, գոյացած համազօրը գրիչն ուղղում է դէպի վերեւ ու մի քիչ աջ:

Սակայն շուտով ստացուում է մէկ այլ ազդակ՝ դադարեցնելու համար շարժումը դէպի վեր:

Այսքանը կատարուում է բոլոր դէպքերում, սակայն այս պահին գրողը պիտի իրագործի սուր անկիւնը: Որպէսզի անկիւնը ստացուի յստակօրէն գրիչը պիտի մի պահ կանգ առնի Բ կէտում եւ յետոյ նոր շարժուի աջ (տարբերակ ա): Այդպէս էլ լինում է, երբ գրիչը դանդաղ է շարժուում. գրիչը ստանում է շարժումը արգելակող ազդակ եւ կանգ է առնում: Սակայն, եթէ գրիչը շարժուում է մեծ թափով, միշտ էլ, որ այդպէս է լինում: Աւելի յաճախ գրողը չի կարողանում հաշուարկել ազդակի այն չափը, որի արդիւնքում գրիչը կանգ կառնի Բ կէտում: Եւ կախուած նրանից, թէ գրողը որքանով է մտադիր շեշտել գրանշանի այդ առաջնայատկութիւնը՝ հնարաւոր է եւս երկու տարբերակ. գրչին հաղորդուող աջից ձախ եւ վերեւից ներքեւ արգելակող ազդակները կարող են նախապէս հաղորդած ազդակներից բացարձակ չափով աւելին լինել կամ՝ պակաս:

Մի դէպքում (տարբերակ բ) ազդակների յաւելուրդային չափերը, գումարուելով նախորդներին, տալիս են համազօր ուղղուած աջ վերեւից դէպի ձախ ներքեւը. այս պահին գրիչը ստանում է դէպի աջ տանող ազդակ (հորիզոնական մասնիկն իրագործելու համար) ու որոշ չափով նաեւ վերեւ՝ ձեռքի եւ թղթի հետ շփման ուժի գոյութեամբ եւ մաշկի որոշակի առաձգականութեամբ պայմանաւորուած, որն աստիճանաբար փոխում է համազօրի ուղղութիւնը՝ հաղորդելով գրչին աղեղաձեւ շար-

ժողովը՝ աստիճանաբար մեծացող շառավիղով: Արդիւնքում անկեան փոխարէն գոյանում է գալար:


Միւս դէպքում (տարբերակ դ) ազդակների չափերը եւ մասնաւորապէս՝ աղից ձախ արգելակողը, կարող են աննշան լինել, եւ ոչ միայն գալար չի գոյանայ, այլեւ գրիչն առհասարակ կանգ չի առնի, եւ երկու մասնիկները միասին կը կազմեն միասնական կոկիկ աղեղ՝ սոսկ աննշան ուռուցիկութեամբ այն տեղում, ուր պիտի գտնուէր անկիւնը:

Մօտաւորապէս այսպիսին են այն երեւոյթները, որոնք բերում են ընդամէնը մէկ պարզ գրանշանի գոյացմանը: Գործնականում, իհարկէ, կարիք չկայ իւրաքանչիւր գրանշանի իրագործման ընթացքն ուսումնասիրել մեխանիկայի տեսակէտից. դա կարող է արուել եւ փորձնական ճանապարհով: Կարելի է բազմաթիւ անձանց առաջարկել իրագործել հետազոտող գրանշանի ենթադրական նախորինակը՝ առանձին մասնիկների իրագործման նախապէս առաջադրուած տարբեր հերթականութեամբ եւ ուղղութեամբ: Փորձի մաքրութեան համար փորձողները չպիտի ծանօթ լինեն այն գրանշանին, որի ծագումը հետազոտում է: Ստացուած արդիւնքները կը համեմատուեն հնագրական տուեալների հետ: Համընկնումները կը վկայեն, որ տուեալ գրանշանն, իրօք, կարող է համարուել հետազոտող գրանշանի նախորինակ, հակառակ դէպքում՝ ոչ: Եթէ փորձը կատարեն տարբեր անձինք, դրա միջինացուած արդիւնքը կարելի է բաւականին հաւաստի հիմք համարել հետազայ ուսումնասիրութիւնների համար: Այսպիսով, այս եղանակի կիրառմամբ (այն կարելի է անուանել փորձնական տառաբանութիւն) առաքանական ուսումնասիրութիւնները կարող են ստանալ վերանշանային անաչառ հիմք, ինչը նուազա-

գոյնի կը հասցնի ուսումնասիրողի անձնական տեսակէտների ազդեցութիւնը:

Այսպիսով, եթէ ենթադրուում է, որ տուեալ գրանշանը փոխառութեան արդիւնք է, ապա, ունենալով դրա որեւէ վարկածային նախորինակ, կարելի է պարզել՝ կարո՞ղ էր արդեօք այն ձեւափոխութիւնների արդիւնքում վերածուել այդ գրանշանի: Միաժամանակ պէտք է գիտակցել, որ նոյնիսկ դրական արդիւնքը վերջնական համարուել չի կարող, քանի որ տուեալ ձեւը կարող է գոյանալ տարբեր նախորինակներից՝ նոյնարդիւնք փոփոխման (convergent) ճանապարհով, եւ թէ դրանցից ո՞րն է եղել նախորինակը իրականում, այս եղանակով անհնար է պարզել, եւ անհրաժեշտ են լրացուցիչ փաստեր:

Այսպէս, դիտարկուած անկիւնակի (որը, փաստօրէն, յունական Γ-ն է) ձեւափոխումների շարքում տեսնում ենք մի քանի ձեւեր, որոնցից մէկը (է) ոչ այլ ինչ է, քան յունական փոքրատառ (ձեռագիր, արագագիր) Գ-ն, իսկ միւսը (բ) ներկայացնում է հայերէն մեծատառ Գ-ն: Սակայն սա դեռ բաւական չէ պնդելու համար, թէ հէնց յունականից է ծագում հայկական գրանշանը: Բանն այն է, որ Գ տառը նոյն յաջողութեամբ կարելի է ստանալ նաեւ այլ գրանշաններից: Օրինակ՝ լատինական G-ից, ինչը հաստատուում է շատերի ձեռագրերում դրանց նոյնութեամբ եւ պարզապէս՝ իւրաքանչիւրի անձնական փորձով:

 Այնպէս որ, առանձին գրանշանների փոփոխուած ձեւերի նմանութիւնը դեռ ոչինչ չի նշանակում, եւ կարող է պատահական լինել: Սակայն եթէ որեւէ գրային համակարգի գրանշանների զգալի մասը հնարաւոր ձեւափոխութիւնների բազմութեան մէջ ունենայ մէկ այլ համակարգի գրանշաններ զգալի մասը, դա արդէն նուազագոյնի կը հասցնի պատահականութեան հնարաւորութիւնը:

ՓՈՒՍԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ

Որեւէ գրային համակարգ կարող է ստեղծուած լինել յատուկ տուեալ լեզուի համար, բայց կարող է եւ փոխառուած լինել:

Ի՞նչն է դրդում փոխառել որեւէ գրային համակարգի այս կամ այն յատկութիւնը: Եւ կամ հակառակը. ի՞նչը կարող է դրդել խուսափելու փոխառումից: Առհասարակ, որեւէ գիւտ դատարկ տեղում չի արւում: Գիւտարարութեան ամբողջ պատմութիւնը վկայում է, որ ցանկացած գիւտ ունենում է որեւէ նախորինակ: Մեր օրերում գիւտի պաշտօնական գրանցման ժամանակ պարզապէս պահանջուում է նշել նախորինակը, քանի որ այն չի կարող չլինել: Գոյութիւն ունեցող փորձը կարող է չօգտագործուել եթէ այն յայտնի չէ գիւտարարին կամ եթէ դրա մերժումն ինքնանպատակ է:

Գրի դէպքում նախորինակից չհրաժարուելը նաեւ կազմակերպչական հիմնաւորում ունի: Գրային համակարգ ստեղծելը ինքնանպատակ չէ. այն դեռ պիտի դասաւանդուի եւ տարածուի ժողովրդի զանգուածում: Եւ ահա, եթէ հարեւան ազգերն արդէն ունեն որեւէ գիր, ակնյայտ է, որ ժողովրդի մէջ կարող են գտնուել բազմաթիւ մարդիկ, որոնք տիրապետում են դրան: Այդ իսկ պատճառով իմաստ ունի որպէս հիմք ընդունել ո՛չ թէ կամայական գիր, այլ ժողովրդի մէջ տարածուածը: Օրինակ, եթէ մեր գիրը այսօր ստեղծուէր, անկասկած դրա հիմքում կը դրուէր լատիներէնը (որպէս ամենատարածուած գրային համակարգ)՝ որոշ ուսական տառերի եւ այլ հանրայայտ նշանների յաւելմամբ:

Այս առումով կարեւոր է, որ յաճախ, հայոց տառաձեւերի մասին խօսելիս հեղինակները կարծիք են յայտնում, թէ այս կամ այն տառը ստեղծելիս Մաշտոցը երկարացրել է (կամ կարճացրել է, կորացրել է, ուղղել է) որեւէ նախորինակի այս կամ

այն մասնիկը: Մինչդեռ, որեւէ գրային համակարգ որպէս հիմք ընդունելը բոլորովին անիմաստ է, եթէ յետոյ գրանշանները պիտի միտումնաւոր կերպով անձանաչելի դարձուեն: Իհարկէ, Մաշտոցը (աւելի ճիշտ՝ Հոռփանոսը) պիտի որ կոթողայնացնէր ինչ-որ նախորինակ գրանշանների նկարուածքներ, սակայն նոյնիսկ այս դէպքում դա պիտի կատարուէր այնպէս, որ գրանշանների հանրածանօթ կերպարին լուրջ վնաս չհասցուէր:

ՀԱՅՈՑ ՏԱՌԱՁԵԻՐԻ ԾԱԳՈՒՄԸ

Հայոց տառաձեւերի գոյացման հարցում համընդհանուր ճանաչում գտած կարծիքներ դեռեւս ձեւաւորուած չեն:

Այն, որ հայոց գիրը գոնէ մասամբ փոխառուած է, այսօր ոչ մի լուրջ ուսումնասիրող չի ժխտում: Նոյնիսկ հակառակը. հետազօտողներն ընկել են միւս ծայրայեղութեան մէջ, եւ չկայ հարեւան մի այբուբեն, որից փորձ չարուէր դուրս բերել հայկական գոնէ որեւէ տառ: Որոշ հեղինակներ նոյնիսկ գտնում են, թէ Մաշտոցը միաժամանակ օգտուել է մի քանի այբուբեններից: Իբր Մաշտոցը օգտուել է «թէ՛ մէկից եւ թէ՛ միւսից, ընտրելով նրանց միջից իրեն յարմար երեւացածները, փոքրիկ փոփոխութիւն մտցնելով նրանց մէջ»<sup>3</sup>: Թէ որո՞նք են յարմարութեան չափանիշները, չի ասուում, իսկ փոփոխութիւններ մտցնելու անհրաժեշտութիւնը ուսումնասիրողներից ոմանք բացատրում են այլ գրային համակարգերից տարբերուելու ( ) ձգտումով, կարծես թէ Մաշտոցը ստեղծում էր ոչ թէ համազգային այբուբեն, այլ մի ինչ-որ գաղտնագրութեան համակարգ:

Այս կարծիքները չեն կարող չզարմացնել: Եթէ մի կողմ թողնենք գաղափարախօսութեան դերը գրային համակարգի ընտրութեան գործում, ապա այն պիտի որոշուի՝ գործածման յարմարութեան նկատառումներից ելնելով: Որեւէ գրանշանի

փոխառութիւնն իմաստ ունի, եթէ այն յայտնի է ժողովրդի համեմատաբար լայն շրջաններում, իսկ որքան շատ լեզուներից կատարուի միաժամանակեայ փոխառումը, այնքան կը նեղանայ դրանք տիրապետողների շրջանակը: Այդ դէպքում պարզապէս կարելի է յօրինել տուեալ հնչիւնը պատկերող պատահական նշան: Նոյն պատճառով անիմաստ է նաեւ փոխառուած գրանշանի միտումնաւոր ձեւափոխութիւնը, որի մասին ասուեց վերեւում:

Այսպիսով, առողջ տրամաբանութիւնը յուշում է, որ տուեալ լեզուի այբուբենի հիմքը կարող է կազմել որեւէ մէկ, առաւել ընդունելի գրային համակարգ, որը կարող է յաւելուել այլ, բայց լաւ յայտնի համակարգերից վերցրած առանձին հանրածանօթ գրանշաններով<sup>4</sup>: Եւ իրօք, բոլոր այն այբուբենների հիմքում, որոնք փոխառութեան արդիւնք են, որեւէ մէկ գրային համակարգ է դրուած: Յունականի դէպքում դա փիւնիկեան գիրն է, դպտիականի, կիրիլեանի դէպքում՝ յունականը եւ այլն: Հաւանական պէտք է համարել, որ հայոց այբուբենն էլ բացառութիւն չէ եւ նրա կորիզը կազմել է որոշակի մէկ գրային համակարգ, որը միայն յաւելուել է (միանուագ կամ տարբեր ժամանակներում) այլ այբուբեններից վերցնուած, կամ նորաստեղծ գրանշաններով<sup>5</sup>: Բայց ո՞րը:

Յիշենք, որ հայոց կոթողային տառաձեւերը, էպպէս տարբերուելով կոթողային յունականից, չափազանց մօտ են յունական արագագրականին՝ փոքրատառերին: Փաստօրէն, յունական փոքրատառերը շրջակայ գրային համակարգերից հայկականին ամենամօտիկ տառաձեւերն են: Համեմատենք. Ե եւ Ե, Թ եւ Թ, Շ եւ Շ, Պ եւ Պ եւ այլն: Սա նկատուելի է վաղուց: Սակայն, քանի որ յունական տառերի փոքրատառ տարբերակը՝ «մինուսկուլը», ընդունել է իր հանրածանօթ տեսքը մօտաւորապէս եօթերորդ դարում միայն, յունական փոքրա-

տառերի եւ հայոց գրերի փոխադարձ կապը մերժուել է: Մինչդեռ սա փաստ է, որը պէտք էր բացատրել:

Դա, մասնաւորապէս, կարող է նշանակել, որ հայոց գրանշանները պարզապէս յունական կոթողային (գլխատառ) տառաձեւերի քիչ այլ զարգացման արդիւնք են: Այդ դէպքում, եթէ, կիրառելով գրանշանների վերոյիշեալ վերլուծութեան եղանակը յունական տառաձեւերի փոփոխութիւնների շարքերում մենք նկատէինք հայոց տառաձեւերի զգալի մասը, յունական այբուբենը կարելի էր դիտել որպէս հայկականի նախօրինակը լինելու յաւակնորդ: Բնականաբար, խօսքը ոչ թէ ժամանակակից յունական տառաձեւերին է վերաբերում, որոնք կրել են լատիներէնի լուրջ ազդեցութիւնը, այլ՝ հնագոյն: Եւ իրօք, մեր կատարած վերլուծութեան արդիւնքում պարզ դարձաւ, որ յունական տառաձեւերի մեծ մասի փոփոխութիւնների շարքերում յայտնուում են հայոց տառաձեւերը: Յունական դասական կոթողայինից ծագած լինելու տպաւորութիւն են թողնում առնուազն Ա, Գ, Դ, Ե, Զ, Թ, Կ, Մ, Ն, Շ, Ո, Պ, Տ, Ի, Փ, տառերը, այսինքն՝ շուրջ 15-ը, ինչը կազմում է յունական այբուբենի 62,5 տոկոսը: Այսպիսով, յունական գիրը լուրջ յաւակնորդ կարող է համարուել հայոց գրի նախօրինակը լինելու համար<sup>6</sup>:

Իսկ կա՞յ որեւէ այլ գրային համակարգ, որը կարողանար յաւակնել այդ դերին: Յիշենք, որ յունական գիրը ծագում է փիւնիկեան գրից: Այդ դէպքում ինչի՞ կը բերի փիւնիկեան գրանշանների վերլուծութիւնը: Արդեօ՞ք դրանց փոփոխութիւնների շարքում կը տեսնենք հայկական տառերի նախօրինակներ: Եւ իրօք (տե՛ս ստորեւ), դա հնարաւոր է անել եւ նոյնիսկ աւելի յաջող, քան յունականների դէպքում. գործնականում բոլոր 22 փիւնիկեան տառերից դուրս են բերուում հայոց համա-

պատասխան տառերը, նաեւ՝ այն երկուսը, որոնց համապատասխան հնչիւնները յունարէնում վերացել են (բայց կան հայերէնում), ուստի եւ դրանք դուրս են մնացել յունական այբուբենից: Եւ ահա, դրանցից ծագած տառերը մենք տեսնում ենք հայոց այբուբենում:

Նման 100-տոկոսանոց նոյնացումը կասկածի տեղ չի թողնում, որ հայոց այբուբենի նախօրինակը լինելու հիմնական յաւակնորդը փիւնիկեան գիրն է: Կարելի է, իհարկէ, ենթադրել, որ նախօրինակը եղել է ոչ թէ փիւնիկեանը, այլ մէկ այլ սեմական գիր, օրինակ՝ ուշ արամէականը<sup>7</sup>: Սակայն, արդէն միջին արամէական տարբեր գրերի վերլուծութեան արդիւնքում դրանցից դուրս են բերուում հայոց ոչ բոլոր տառերը, գրեթէ անյոյս են հստրանգելոն/եւ ասորական միւս գրերը, էլ աւելի վատ արդիւնքների ենք հասնում՝ վերլուծելով պահլաւական եւ սասանեան գրերը. սրանցից յաջողում է հաստատապէս ստանալ հազիւ 2-3 տառ: Եւ դա բնական է. դրանք բոլորն էլ, լինելով նոյն այդ փիւնիկեան (հիւսիսսեմական) գրի ժառանգորդները, արդէն իսկ ներկայանում են որպէս դրա արագագրական ձեւերի զարգացման տարբեր ճիւղեր:

Սա, իհարկէ, հակասում է Հայագիտութեան մէջ արմատաւորուած այն կարծիքին, թէ հայոց գիրը ստեղծուել է Ե. դարում, քանի որ այդ ժամանակ փիւնիկեան գիրը վաղուց արդէն գործածութիւնից դուրս էր եկել: Բայց հարցին կարելի է եւ դուրս էր եկել. իսկ առհասարակ կա՞յլ կողմից նայել. իսկ առհասարակ կարող էր, արդեօք, հայոց գիրը ստեղծուած լինել Ե. դարում միայն: Դրան հակասում են բազմաթիւ հանգամանքներ: Դրանցից մի քանիսը, օրինակ՝ օտար աղբիւրների վկայութիւնները հայոց գրի գոյութեան մասին, Ե դարի հայոց գրական լեզուի կայծակնային արագութեամբ կատարելութեան հասնելը եւ այն հանրայայտ փաս-

տը, որ անհնար է կառավարել երկիրը առանց ազգային մեծամասնութեան լեզուով գրի, նկատուել են վաղուց եւ գրչի մէկ հարուածով մերժուել: Կարելի է նշել եւ այլ հանգամանքներ: Սակայն դրանք, ինչպէս նաեւ հայոց տառերի հերթականութիւնը, հնչիւնաբանութիւնը, անուանումները, փոխառութեան հանգամանքները եւ այլն, մէկ ա՛յլ ուսումնասիրութեան խնդիր են: Սոյն յօդուածը հիմնականում նուիրուած է հայոց տառերի արտաքին ձեւի վերլուծութեանը, որի ընթացքում ապացուցուում է, որ մաշտոցեան տառաձեւերի հիմքում հիւսիսսեմական (արեւմտասեմական, փիւնիկեան) գրանշանների արագագրական տարբերակներն են: Հաւանաբար, հէնց սրանք են, որ յայտնի են որպէս դագիւեան գրեր:

**ՍԵՍԱԿԱՆ ԳՐԱՆՇԱՆՆԵՐԻ ՅԱՋՈՐԴԱԿԱՆ ՁԵՒՓՈՒՄԱՆ ԸՆԹԱՑԵԸ**

Ստորեւ, անդրադառնալով իւրաքանչիւր փիւնիկեան գրանշանի նկարուածքին առանձին-առանձին, փորձ է արուել վերականգնել դրանց յաջորդական ձեւափոխութիւնները, որոնց արդիւնքում գոյացել են հայոց տառերը՝ ազգակից այլ գրային համակարգերի գրանշանների համակարգում (աղիւսակը տե՛ս յօդուածի վերջում): Շեշտենք, որ սա սոսկ աշխատանքային վիճակ է, եւ նոր տուեալները կարող են փոփոխութիւն մտցնել առաջարկուող գծապատկերներում: Մեծ սլաքները ցոյց են տալիս գրանշանների փոփոխման ուղղութիւնը: Փոքր, թուակիր սլաքները ցոյց են տալիս տուեալ գրանշանի մասնիկների իրագործման այն ուղղութիւններն ու հերթականութիւնը, որոնք բերում են մեծ սլաքների աջ կողմում պատկերուած գրանշանների գոյացմանը: Շեշտենք, որ պարտադիր չէ, որ աջ կողմում գտնուող գրանշանը աւելի ուշ ժամանակաշրջանի նմոյշ լինի. դրանք



ըորդաբար)։ [ձ] «ձետա»՝ հին յունարէնում, եւ [զ] «զիտա»՝ նոր յունարէնում։

ԽԵԹ

Դատելով էլ ըթ — էտա տառանունների համապատասխանութիւնից, որը նկատում է Հր. Աճառեանը<sup>13</sup>, հաւանաբար հնագոյն հայերէնում այս գրանշանից գոյացած Ը տառով նշանակուել է [է] հնչիւնը, ինչպէս որ դա արուել է նաեւ յունարէնում։ Սակայն աստիճանաբար բառակազմի [է] հնչիւնը մի շարք բառերում դարձաւ [ը], ինչպէս դա երեւում է [ը]-ից սկսուող բառերի ծագումից, օրինակ. ընկոյզ>engouz, ընծայ>eng'hæi, ընկենու>seug, ընթանալ>senth, ընդեր>ente-ro<sup>14</sup> նոյնանալով գաղտնավանկի հնչիւնին։ Սակայն այդ նոյն տառով այլ տեղերում պիտի պատկերուէր նաեւ [է] հնչիւնը, ինչը խախտում էր այբբենական սկզբունքը։ Խնդիրը լուծելու համար, հաւանաբար, Ե-ի առաւել անկիւնաւոր գրչատեսակներից մէկը ընդունուեց որպէս [է]-ի գրանշան։ Իսկ Ը-ն մնաց [ը] հնչիւնը նշանակելու համար, ինչպէս եւ հաստատուել էր աւանդաբար<sup>15</sup> (մօտ եղանակով նոր ժամանակներում Եւրոպայում լատիներէնի համար սրանկիւն V-ի կիրաւուն գրչական տարբերակը ընդունուեց որպէս [ու]-ի գրանշան՝ U)։

ՅՈՂ

Ուշագրաւ է համապատասխան հայկական Ի տառի որոշ միջնադարեան գրութիւններում դիտուող ստորին խաղիկը, որը կարող է հին ձեւի հետքը լինել՝ Ի<sup>16</sup> (նոյնը Մ, Կ, Լ, Ս տառերի դէպքում՝ ստորեւ)։

ԸԱՖ

Թէեւ այս գրանշանից գոյացել է հայկական Կ տառը, սեմականում այն նշանակում է [ք] հնչիւնը։ Այս մասին ստորեւ։ Հայկական տառն այս գրանշանից կարող էր ծագել առնուազն երկու ճանապարհով։

Սակայն առաւել հաւանական է թւում գծագրում բերուած ստորին տարբերակը, քանի որ այս դէպքում կարող էր մնալ ստորին աջ խաղիկը, որը մենք տեսնում ենք որոշ գրութիւններում՝ Կ։

ԼԱՄԵՂ

Թւում է թէ այս տառը սկզբում արդէն եղել է աջակողմեան, իսկ յունականը գոյացել է ժամացոյցի սլաքի ուղղութեամբ պտոյտի արդիւնքում։ Սակայն որոշ նմոյշներ, օրինակ՝ փիւնիկեան՝ ԼԿ<sup>17</sup>, վկայում են, որ այստեղ նոյնպէս սկզբունքը չի խախտուել, եւ կամայական միջատութեան կարիք չի եղել. սկզբնական գրանշանի հորիզոնական տարրը նախ շրջուել է՝ կապուելով յաջորդ գրանշանին, ապա ընկալուել որպէս կապակցող տարր եւ, վերջապէս, վերաստուգաբանուել կրկին որպէս հորիզոնական մասնիկ, բայց՝ հակառակ ուղղուած։ Նոյն ձեւով գոյացել է յունական տառը. ստորին տարրի նուազման պահին նախորդ գրանշանի հետ կապակցող գիծը ընկալուել է որպէս գրանշանի բաղադրիչ եւ ապա երկարացուել հետագայ կոթողայնացման ժամանակ՝ համաչափութեան հասնելու նպատակով։ Լատինական արագագրերում կան Լ-ի կատարումներ՝ ճիշտ մեր Լ-ի ձեւով՝ ԼԼ։

ՓԵ

Այս գրանշանի հնագոյն յայտնի ձեւերը՝ փիւնիկեանները, անկիւնաւոր չեն։ Սակայն այդ ձեւը ենթադրուում է, քանի որ յունական հնագոյն ձեւերը ուղղանկիւն են։ Ճիշտ է, դա կարող է լինել նաեւ կոթողայնացման արդիւնք, սակայն արամէական քառակուսի տառատեսակի ձախ վերին խաղիկի գոյութիւնը յուշում է, որ այն սրածայր գագաթի գալարածեւ իրագործման արդիւնք է (համեմատեք գիմել-ի անկիւնն ու գիմ-ի գալարը)։ Այդ պատճառով, որպէս սկզբնական ձեւ, դրուեց յունականի օրինակով վերականգնուած ան-

կիւնաւոր տարբերակը։ Սկզբնական ձեւը անհամաչափ է։ Յունական ձեւերը յաճախ համաչափ են. սա արդէն, ամենայն հաւանականութեամբ, կոթողայնացման արդիւնք է։

ԾԱՊԷ<sup>18</sup>

Սա ներկայացնում է ամենաանհաւանական թուացող զարգացումների օրինակը. անհնար է թւում, որ բեկեալներից բաղկացած այս գրանշանը կարողանար վերածել Ծ-ի պէս կիրաւուն նրբագեղ տառի։ Յատկանշական է գրելաձեւերի մեծ մասում պահպանուած ձախ թեւի ուղղահայեաց տարրը, որը սովորաբար ընկալուում է որպէս վայելչագրական տարր (գծափակոց), մինչդեռ սա փիւնիկեան գրանշանի համապատասխան տարրի մնացորդն է։

ԿՈՓ

Այն, որ հայոց Ք-ն այս տառի ժառանգորդն է, կարող է տարօրինակ թուալ։ Այն մեր այբուբենում տեղադրուել է յունական X-ի դիմաց, եւ համապատասխանեցուած է նաեւ լեզուական փոխառութիւններում։ Սակայն այն, որ մեր տառը համապատասխանում է կոֆ-ին թէ՛ հնչմամբ եւ թէ՛ գրանշանով, կասկած չի թողնում այս տառերի ազգակցութեան հաշուով։ Նոր պունիկեան արձանագրութիւններում հանդիպում են կոֆ-ի մի քանի գրելաձեւեր, որոնք լիովին հաստատում են նման անցումը՝ Ք։ Յունական X-ին նմանութիւնը պէտք է համարել պատահական. ինչպէս կը տեսնենք ստորեւ, յունական X-ի ազգակից հայոց գրում նոյնպէս կայ, եւ դա հէնց Խ-ն է։

1	2	3	4
բ	պլէֆ	պլֆա	այբ
գ	բէտ	բետա	բեց
դ	գիմէլ	գամմա	գիմ
ե	դալէտ	դելտա	դա
զ	հե	էպսիլոն	եչ
է	վաւ		

գ	գայից	գետա	գա
խ	խէթ	էտա	է
տ	տէթ	թետա	թթ
			թո
ի	յոդ	յոտա	ից(ի)
			յից
			յէ
			ծա
ք	քաֆ	կապպա	կեց
			հո
			ձա
լ	լամէդ	լամբդա	ղատ
			ճէ
մ	մէմ	միւ	մեց
			յի
ն	նուց	նիւ	նու
ս	սամէկ	քսի	շա
օ	այից	օ միկրոն	ո
			չա
պ	փէ	պի	պէ
			քէ
ծ	ծադէ	սագ	
կ	կոֆ	կոպպա	
ր	րէշ	րո	րա
շ	շից	սիգմա	ւէ
			վեւ
թ	թաւ	տաւ	տիւց
			րէ
			ցո
		ի պսիլոն	վիւց
		ֆի	փիւր
		խի	քէ
		պսի	
		օ մեգա	

1. Սեմական գրանշանների հնչիւնային արժէքը
2. Սեմական գրանշանների անուանումները
3. Յունաց տառերի անուանումները
4. Հայոց տառերի անուանումները

ՐԷՇ

Այն, որ այս գրանշանը վերածուել է հայերէն Բ-ի, դժուար չէ պատկերացնել. դրա ապացոյցը մեզ տալիս է նոր պունիկեան գրանշանի ճիշտ մեր տառի ձեւը՝ Բ (բնականաբար՝ հայելային տարբերակով)։ Սակայն, ինչ վերաբերում է Ռ-ին, ապա այն կարող էր գոյանալ ե՛ւ որպէս կրկնագրութիւն, ե՛ւ որպէս նոյն Բ-ի հետագայ զարգացման արդիւնք՝ լատինական Բ-ի օրինակով։ Սակայն նախապատուութիւնը պէտք է տալ առաջին տարբերակին, քանի որ գրանշանի կրկնութիւնը, որպէս նոր տառի գոյացման հնարք, մենք

տեսնում ենք նաև Վ-ի, ու, թերեւս (տե՛ս ստորեւ), Յ-ի դէպքում:

Սին

Միջնադարեան մի տառածեւ ունի աջ միջին ելուստ՝ **Ս**: Սա ներկայացուած ձեւափոխութեան ապացոյցը կարելի է դիտել: Այն պիտի որ լինի սեմական գրանշանի երկու գոգաւորութիւններից մէկի մնացորդը, որը հետագայում, ընկալուելով որպէս խաղիկ, հեռացուել է, յատկապէս որ շարուածքի տեսակէտից սա խոչընդոտող մասնիկ է, եւ դրանից բացի, նմանեցնում է Ա-ին:

Թաւ

Այն որ, այս տառից է ծագել հայոց Տ-ն, հաստատուում է հին գրելաձեւերի ուղիղ միջին կանգնակով՝ **Տ**: Նման ձեւափոխութիւնը հաստատուում է նաև յունական եւ լատինական (մասնաւորապէս՝ Պոմպէի պնակիտների) արագագրերի գոյութեամբ՝ **Տ**: Հետագայում, շարուածքը բարելաւելու պահանջից ելնելով, ստացել է այժմեան ձեւը:

ՀԱՅՈՑ «ԼՐԱՅՈՒՅԻՉ» ՏԱՌԵՐԸ

Այսպիսով, հայոց այբուբենի կորիզը կազմում են փիւնիկեան այբուբենից փոխառուած 22 տառերը: Սրանց մեծ մասը՝ 15-ը, այս կամ այն չափով պահպանել է սեմական անուանումները կամ դրանց հետքերը եւ դրանց ձեւափոխուած, կրճատուած տարբերակն է, ընդ որում՝ աւելի մօտ սեմականին, քան յունականին (տե՛ս աղիւսակ Բ):

Նախամաշտոցեան այբուբենի տառերի քանակի մասին կան տարբեր վկայութիւններ: Դաւիթ Անյաղթի հանելուկներից մէկում՝ փկնարկուող թիւը՝ 24, հոգեբանական նկատուումներից ելնելով, ամենահաւանականն է թւում. հանելուկի մէջ կարող է մտնել միայն հանրայայտ ո-

րեւէ դրոյթ: Եթէ այս ենթադրութիւնը ճիշտ է, ապա եղել է եւս երկու տառ (դեռ չհաշուած, որ կարող էին լինել որպէս տառ չընկալուող եւ միայն Մաշտոցից յետոյ տառի կարգավիճակ ստացած այլ գրանշաններ): Կարելի է հաւանական համարել, որ դրանք են եղել **Խ** եւ **Փ** տառերը (սրանց մասին՝ ստորեւ):

Միւս յաւակնորդն է Ճ-ն, որը պարզորոշ փոխառուած է զպտիական այբուբենից: Ղպտիական այբուբենը ստեղծուել է մօտաւորապէս Բ-Գ դարերում, երբ հայերը կապեր են ունեցել զպտիների հետ, ուրեմն Ճ տառը սկզբունքօրէն կարող էր փոխառուել այդ ժամանակահատուածում: Սակայն, լինելով համեմատաբար նոր փոխառուած գրանշան, այն մինչեւ Մաշտոցի բարեփոխումը կարող էր եւ այբբենական տառ չհամարուել, ինչպէս հետագայում այբբենական չէին համարում Օ-ն եւ Յ-ն՝ մինչեւ 1921 թուականի վերափոխումը:

Հաւանաբար, այս 24 տառերն են կազմում գրանշանների այն խումբը, որը յայտնի է որպէս «գանիէլեան» գիր: Հետեւապէս մնացած տառերը՝ այբուբենի ուղիղ մէկ երրորդը, Մաշտոցի նորամուծութիւններն են:

Կարող է հարց առաջանալ, թէ ինչպէս էին այդ 24 տառերով հայերն արտայայտում մնացած 12 հնչիւնները: Պէտք է ասել՝ մեծ դժուարութեամբ. իզուր չէ, որ հին հայոց գրերը համարուել են «պակասաւոր»: Յայտնի են տարբեր այբուբեններում այդ խնդրի լուծման տարբեր ձեւեր: Դա կարող էր արուել վերոյիշեալ երկգրութիւնների, օրինակ՝ ԼԼ-ի կիրառմամբ: Այս երկգրութեան նախամաշտոցեան լինելը վկայում է այն, որ վերջինս կազմուած է հէնց արագագրական (փոքրատառ) «վիւն»-երից եւ ոչ թէ կոթողային, այլապէս Վ-ի փոխարէն կ'ունենայինք մօտաւորապէս այսպիսի մի տառ՝ Խ: Այս կրկնագրութիւնները Մաշտոցը կարող էր

դարձնել ինքնուրոյն տառեր: Այսպիսով, նախամաշտոցեան գրում կար հնարաւորութիւն արտայայտելու աւելի շատ հնչիւններ, քան տառերի թիւն էր, ինչպէս որ դա արւում է ժամանակակից բազմաթիւ այբուբեններում, օրինակ՝ անգլերէնում: Սակայն թերութիւնները չափազանց շատ էին: Օրինակ, Ը տառը, հաւանաբար, բառասկզբում ընթերցւում էր կա՛մ [ը], կա՛մ [է], իսկ բառամիջում՝ միայն [է], [ձ] եւ [զ] հնչոյթները արտայայտուում էին միեւնոյն տառով, եւ այլն:

Ստորեւ բերուած են այն տառերը, որոնք անմիջապէս սեմական միջուկից չեն բխում: Նախ այն երեք տառերը, որոնք, հաւանաբար, եղել են արդէն նախամաշտոցեան փուլում:

ՃԵ

Բացայայտօրէն նոյն զպտիական ջանքիա՝ **Ճ** տառն է: Աճառեանը մերժում է այս փոխառութիւնը շատ թոյլ փաստարկով, թէ զպտիական տառն ունի [ջ] արժէքը եւ ոչ թէ՛ [ճ], մինչդեռ սրանք յաճախ են փոխարինում իրար տարբեր բարբառներում, ինչը երեւում է հէնց իր՝ Աճառեանի «Արմատական բառարան»-ից: Ուշագնաւ է այն, որ Ճ տառը Զ-ից տարբերելու համար լայնօրէն կիրառուում է «ճանճի ձ» ճշտող բանաձեւը (երբեք չեն ասում, օրինակ, «ճակատի ձ» կամ «ճուտի ձ»): Սովորաբար, ենթադրուում է, որ խօսքը ճանճ միջատին է վերաբերում: Սակայն չի կարելի բացառել, որ բերուած արտայայտութեան մէջ հրաշքով պահպանուել է այդ տառի սկզբնական «ջանջիա» անուանումը, որը միայն հետագայում է սկսել ընկալուել որպէս «ճանճ» միջատը:

ԽԵ

Այս տառը չի բխում հնագոյն սեմական համակարգից, ուստի եւ աւելի ուշ է ներմուծուել: Դրա աղբիւրը կարող է լինել յունական Ճ-ն, յատկապէս որ, ինչպէս տե-

սանք, հայոց Ք-ն սրանից չի ծագել: Վերեւում արդէն դիտարկուել էր խաչի ձեւափոխութիւնների շարքը, որում, իրօք, յայտնուում է հայոց Խ-ն՝ **Ϡ ϡ**: Սակայն աչքի է ընկնում այն հանգամանքը, որ հայերէն «խաչ» բառի (որն, ըստ Աճառեանի, բուն հայոց բառ է) առաջին հնչիւնը [խ] է, եւ սա հնարաւորութիւն է տալիս ենթադրելու, որ գործ ունենք սկզբնաճիւղաճիւղային սկզբունքի հետ: Հետեւապէս, այս տառը կարող է հայկական ծագում ունենալ, իսկ յունականը՝ հայերէնից փոխառութիւն լինել: Յունական տառի՝ հայերէնից փոխառեալ լինելու օգտին է խօսում նաև այն փաստը, որ այդ տառը (նաև՝ Փ-ն, տե՛ս ստորեւ) նախապէս սկսել են կիրառել արեւելայունական գաւառներում: Բոլոր դէպքերում, այս տառը պիտի յայտնուէր հայերէնում վաղ շրջանում, որպէսզի հասցնէր ենթարկուել նման ձեւափոխութեան: Եթէ այն փոխառուէր յունարէնից Մեսրոպի կողմից, այն կը պահպանէր իր կոթողային խաչաձեւութիւնը:


Փիւր

Այն, որ յունական գրում Փ-ն յայտնուել է Ճ-ի հետ միաժամանակ եւ կրկին՝ արեւելեան գաւառներում, կասկած է առաջացնում, որ այն նոյնպէս կարող է սկզբնահնչիւնային ծագում ունենալ եւ ստուգաբանուել հայերէն: Եւ իրօք, հայերէնում ունենք «փեռեկել» բառը («երկատել» իմաստով), որը սկսւում է Փ-ով, իսկ Փ-ի ձեւն, իրօք, միջին գծով երկատուած շրջան է եւ կարող էր «երկատել» բառի պատկերազիրը լինել: Եթէ ենթադրութիւնը ճիշտ է, ապա սա կրկին բնիկ հայ գրանշան է, իսկ յունականը՝ փոխառութիւն<sup>19</sup>:

ԺԵ, Չա, ՉԵ, Յո

Այս տառերի ձեւերում նկատուում է մի ակնբախ յատկութիւն. դրանք յիշեցնում են հորիզոնական առանցքի նկատ-

մամբ շրջուած Գ, Շ, Ճ, Ծ տառերը, որոնք նշանակում են համապատասխանաբար մօտիկ հնչիւններ, կազմելով Գ—Ժ, Զ—Շ, Զ—Ճ, Զ—Ծ գոյգերը.



Տարօրինակ կարող է թուալ առաջին գոյգը. հայերէնում Գ եւ Ժ հնչիւնները հարազատ չեն ընկալւում: Օրինակ, ռուսերէնում դա սովորական անցում է՝ бешбешатъ, дорога-дорожники եւ այլն: Սակայն պէտք է յիշել, որ Մաշտոցի դարում Հայաստանը գտնւում էր պարթեւական զգալի ազդեցութեան տակ, իսկ պահլաւերէնում այդ անցումը նոյնպէս նկատուած է: Դա երեւում է, օրինակ, պահլաւերէնից փոխառուած բառերում. ունենք՝ բազիմ-բաժիմ, ոյժ-ատոյժ, տոյժ-տուգանք, արգ-արժէք: Զ-Շ գոյգի դէպքում, թւում է՝ շրջումը կատարուել է ոչ թէ հորիզոնական առանցքի, այլ համաչափութեան կենտրոնի շուրջ, սակայն, քանի որ այս տառի նախօրինակը «սամէք»-ը, համաչափ է եղել, չի բացառւում, որ հնում գոյութիւն է ունեցել Ծ-ի հայելային տարբերակը, որն, ի դէպ, աւելի տրամաբանական է աջակողմեան գրի դէպքում, քանի որ հին գրելաոճի ստորին վերջոյթը ուղղուած է դէպի աջ: Սակայն, ինչպէս տեսնում ենք, Զ-ի եւ Զ-ի համար սպասուող ձեւերը որոշ չափով հեռու են այսօրուայ կոթողայիններից: Այնուամենայնիւ, այս գոյգերի գոյութիւնը հաստատուած է պահպանուած միջնադարեան ձեւերով՝ Զ՝ Լ եւ Ճ՝ Ա՝, Ծ՝ Ժ եւ Շ՝ Գ:

Յո, Յի

Այս մտաւորի ծագումը որոշ չափով մութ է մնում: Սրանց ձեւը, թւում է՝ բխում է մէկը միւսից, իսկ որոշ գրելաձեւերում դրանք պարզապէս համընկնում

են. օրինակ՝ Յ: Մեծատառ Հ-ն զգալիօրէն յիշեցնում է լատինական փոքրատառ հ-ի արագագրական ձեւը: Գայթակղութիւն է առաջանում ենթադրել, որ Հ-ն խէթ-ի մէկ այլ զարգացման արդիւնք է, որը կրկնել է լատինական H տառի զարգացման ուղին, իսկ Յ-ն Հ-ից ածանցեալ է: Սակայն անհաւանական է թւում այն, որ «խէթը» կարող էր հայերէնում տալ ե՛ւ [հ], ե՛ւ [է] արժէքներով տառեր:

Այս պահին աւելի հաւանական է Հր. Աճառեանի կարծիքը, որն այդ տառերը համարում է իրանական փոխառութիւն: Ունենք սասանեան նշանը<sup>20</sup> Զ, որը չափազանց նման է միջնադարեան հայ ձեւերին՝ ՅՅՅ: Յ-ն, ենթադրւում է, պահլաւական Յ նշանի կրկնագրութիւնն է (ինչպէս դա արուել է նաեւ Աւեստայի գրում [յ]-ն [ի]-ից տարբերելու համար): Սկզբունքօրէն, հնարաւոր է, որ երկու տառ վերցուել է մէկ այլ՝ նոյնպէս բաւականին ծանօթ համակարգից, թէեւ այս լուծումը յարուցում է մի խնդիր. իրանեան գրերը ձախակողմեայ են, եւ տրամաբանական կը լինէր որպէս նախօրինակ տեսնել սրանց հայելային տարբերակները: Սակայն, հաշուի առնելով, որ խօսքը ոչ հիմնական աղբիւրին է վերաբերում, դա կարող է եւ հասկանալի լինել: Սա կախուած է մէկ այլ կարեւոր հարցից. ե՞րբ է հայոց գրանշանների ուղղութիւնը փոխուել: Փոփոխումը արել է Մաշտոցը, թէ դա կատարուել է արդէն իրենից առաջ: Մաշտոցի ձեւերով դրանց շրջելը պէտք է մերժել, քանի որ շրջումը պիտի բնական ճանապարհով ընթանար՝ որպէս բուստրոֆեդոնի (եզնավարի գրելաձեւի) հետեւանք, այլ ոչ թէ որպէս կամայականութիւն: Դրանից բացի, եթէ դա արած լինէր Մաշտոցը, ապա տարօրինակ է, որ նա չի շրջել նաեւ այս երկու տառերը: Յատկապէս որ երկուսի վերջոյթները դէպի ձախ են, եւ յարմար կը լինէր շրջել դրանք: Ուրեմն, եթէ ըն-

ՀԱՅՈՑ ԵՒ ՅՈՒՆԱՑ ԳՐԵՐԻ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆԸ

Երկու խօսքով անհրաժեշտ է անդրադառնալ հայկական եւ յունական գրերի յարաբերութեանը: Ներկայումս տառաբանութիւնն առաւելապէս հակուած է համարել, որ յոյները փոխառել են իրենց գիրը հիւսիսսեմական ցեղերից, եւ կատարելագործել են այն՝ աւելացնելով ձայնաւորների համար յատուկ գրանշաններ, ընդ որում՝ օգտագործելով դրա համար սեմական՝ այն տառերը, որոնց համապատասխան հնչիւնները յունարէնում բացակայում են: Դրանք են՝ ալէֆ-ը [ա]-ի համար, յոդ-ը [ի]-ի, ւաւ-ը [ու]-ի, հէ-ն [է]-ի եւ այն-ը [ո]-ի համար: Սակայն, եթէ պարզուում է, որ հայոց գրանշանները նոյնպէս անմիջականօրէն դուրս են բերուում այդ նոյն հիւսիսսեմական գրից, հարց է առաջանում. այդ ինչպէ՞ս է ստացուել, որ ե՛ւ հայերէնում, ե՛ւ յունարէնում ձայնաւորները ծագում են միեւնոյն սեմական տառերից: Պատահականութիւնն այստեղ բացառում է, քանի որ խօսքը ոչ թէ մէկ, այլ մի քանի տառերի է վերաբերում: Թերեւս, կարելի է ասել, որ յոդ-ը, ւաւ-ը եւ, մասամբ՝ ալէֆ-ը, արդէն իսկ սեմական լեզուներում կիրառուել են որպէս matres lectionis՝ երկար [ի]-ի, [ու]-ի եւ [ա]-ի համար: Սակայն, նախ, դա չի արուել յստակօրէն, եւ երբեմն, օրինակ, [ա]-ի համար կիրառուել է ոչ միայն ալէֆ-ը, այլ լեւ հէ-ն, իսկ ւաւ-ը գործածուել է, ոչ միայն [ու]-ի, այլեւ [է]-ի համար: Միւս կողմից, միեւնոյն է մնում են այն-ի գործածումը՝ [օ]-ի, ու, թերեւս, հետագայում նաեւ խէթ-ի գործածումը՝ [է]-ի համար:

ՀԱՅՈՑ ԱՅՐՈՒԲԵՆԻ ՇԵՐՏԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Այսպիսով, հայոց այբուբենում տեսնում ենք հետեւեալ երկու խոշոր շերտերը՝ իրենց ենթաշերտերով: Հին սեմական համակարգի հայացուած համակարգը՝ թուով 22 տառ՝ Ա, Բ, Գ, Դ, Ե, Զ, Է, Թ, Ի, Ծ, Կ, Ղ, Մ, Ն, Շ, Ո, Պ, Ս, Տ, Ր, Ի + Խ, Փ (ընդհանուր թուով՝ 24 տառ) եւ Ճ տառը, որը, թերեւս, այբբենական չի համարուել: Սահագոյն եւ ամենախոշոր շերտն է, որը յայտնի է Դանիէլեան գրեր յորջորջմամբ: Ճ-ն, որպէս այբբենական տառ, եւ մնացած 11 տառերը կազմում են մաշտոցեան նորամուծութիւնները: Դրանք եւս կարելի է բաժանել երկու խմբի՝ դանիէլեան գրերի հիման վրայ ստեղծուածներ եւ փոխառուածներ: Առաջիններից են երկու գրչական տարբերակները՝ Զ, Լ, ապա եւ կրկնագրութիւնները՝ Ռ, Վ, ու եւս չորս տառ՝ Ժ, Զ, Զ, Յ հայելային արտապատկերմամբ ստեղծուած: Երկրորդ ենթախումբը կազմում են իրանական Հ, Յ փոխառութիւնները:

Ստացւում է, որ այս տեսակէտից հայոց այբուբենը պիտի որ փոխառեալ լինէր յունականից, բնականաբար՝ հնագոյն շրջանում, քանի որ աւելի ուշ շրջանի յունական գրանշաններից արդէն ոչ բոլոր տառերն են դուրս բերուում: Սակայն այդ





րուագծերը, դիմում են ենթադրութեան, թէ վրաց տառերի ստեղծողը, ուսումնասիրել է հին գրային համակարգերը, այդ թուում եւ՝ հնագոյն յունականն ու փիւնիկեանը, դրանցից վերցրել է վրացականի կարգը, մի տեսակ արհեստականօրէն «հնացրել» նորաստեղծ համակարգը՝ ստեղծելու համար «ուրոյն» ազգային համակարգ<sup>29</sup>: Մի կողմ թողնելով վերեւում շարադրուած նկատառումները գրային համակարգերի ստեղծման տրամաբանութեան վերաբերեալ, որոնք արգելում են «հնացումները», գրանշանների կամայական այլ ձեւափոխութիւնները՝ նկատենք եւս մի հանգամանք, որն աչքաթող է արուում թէ՛ վրաց եւ թէ՛ հայոց գրերի ստեղծումն ուսումնասիրելիս: Դա այն է, որ այբուբենն՝ առանց այդ լեզուն եւ գիրը կրողի, մեռած պատկեր է սոսկ: Եթէ մենք ունենք որեւէ գրութիւն (օրինակ՝ ֆեստիւս սկաւառակը), բայց չգիտենք ո՛չ այդ գրութեան լեզուն, ո՛չ դրա նշանների արժէքները, մենք չենք կարող օգտագործել այն: Եթէ նոյնիսկ վրաց տառերի հեղինակը մի որեւէ գրադարանում գտնէր հնագոյն յունական այբուբենի պատկերը (իւրատեսակ «դանիէլեան գիր»), նա չէր կարող իմանալ, թէ վեցերորդ տեղում գտնուող գրանշանը ի՛նչ հնչիւնային արժէք ունի, քանի որ դա չէին յիշում արդէն նոյնիսկ իրենք՝ յոյները, ինչի պատճառով էլ հէնց հրաժարուել էին այդ գրանշանից: Միայն նորագոյն ժամանակներում հարիւրաւոր մասնագէտների կատարած լեզունների համեմատական վերլուծութիւնների շնորհիւ է յաջողուել վերականգնել (այն էլ ոչ միշտ վստահօրէն) այս կամ այն գրանշանի արժէքը, իսկ 15 կամ 25 դար առաջ, առանց բազմաթիւ լեզուների գրային համակարգերի համեմատութեան, առանց երկլեզուեայ արձանագրութիւնների վերծանման եւ այլ եղանակների կիրառման, դա առհասարակ անհնար էր: Իհարկէ, միշտ էլ կարելի է յամառօրէն պնդել, որ

այն դարերում էլ փայլուն գիտնականներ կային, եւ ամէն ինչ էլ գիտէին, սակայն երբ կարգում ես նոյն այդ յոյն հեղինակների՝ Հերոդոտի, Դիոնիսիոսի եւ այլոց (այն ժամանակուայ՝ ո՛չ երկրորդական գիտնականների) գործերը, պարզ է դառնում, որ իրենք բաւական պարզունակ պատկերացում ունէին գրի ստեղծման մասին եւ ամենաշատը կարող էին առասպելներ պատմել, թէ ով ումից էր փոխառել գիրը, կամ առաջարկել հնչիւնների մակերեսային դասակարգում: Այսինքն, արդէն իրենց դարերում գրի ստեղծման ակունքները կորած էին, իսկ հնչիւնագիտական եւ հնչիւնաբանական խնդիրների մասին նրանք պատկերացում էլ չունէին: Այնպէս որ, միայն «վին» տառի գոյութիւնը վեցերորդ տեղում իր արժէքով հանդերձ (դեռ չհաշուած միւս փաստարկները), բաւական է՝ տեղափոխելու համար վրաց գրերի ստեղծումը մօտ մէկ հազարամեակով դէպի հետ:

Բայց թէ ո՞րն է եղել վրացական գրի անմիջական նախօրինակը, ստոյգ դժուար է ասել: Ինքը՝ յունական գիրն, այն դարերում քիչ էր տարբերուում իր նախօրինակից՝ փիւնիկեան գրից, որից, ինչպէս ասուեց, վրաց տառերն անմիջականօրէն չեն հետեւում: Մնում է երկու տարբերակ. յունաց եւ վրաց գրերի միջեւ եղել է եւս մի օղակ, օրինակ՝ փոքրասիական որեւէ մի գրային համակարգ, կա՛մ էլ վրաց գիրը փոխառուել է ժողովրդական ձեւով՝ ներքեւից, եւ երկար տարիներ ձեւափոխուել է առանց պետութեան կենտրոնական կարգաւորման: Երկրորդն աւելի հաւանական է թուում, քանի որ փոքրասիական գրերը ոճով հեռու չեն կոթողային յունարէնից, մինչդեռ վրացական կլորաւուն տառերը վկայում են պարզորոշ ժողովրդական տարբերային մշակում: Վրացական աւանդոյթը վերագրում է վրաց գրի ստեղծումը Փարնաւազ թագաւորին, այսինքն՝ Բ. ա. Գ-Բ դարերին: Հաւանաբար, Փարնաւազի

օրօք ժողովրդական գիրը ստացել է պետական կարգավիճակ եւ կանոնարկուել է՝ ստանալով կոթողային ձեւ: Մինչեւ այդ պահը, այսինքն՝ առնուազն երեք դար, վրաց գիրն անցել է տարբերային գործածման ուղի, ինչը եւ բերել է տառերի մեծ մասի էական փոփոխմանը: Բոլոր դէպքերում, առանց հնագիտական նոր նիւթի վրաց գրանշանների կրած ձեւափոխութիւնների յաջորդականութիւնը եւ միջանկեալ ձեւերը հազիւ թէ յաջողուի զգալի հաւաստիութեամբ վերականգնել:

Ինչ վերաբերում է հայ եւ վրաց տառերի անուանումների եւ նկարուածքների որոշ նմանութիւններին, ապա, ինչպէս նկատում է Գամկրելիձէն, դրանք պիտի որ հարեւան համակարգերի փոխազդեցութիւնների արդիւնք լինեն: Իսկ թէ ո՞ր ուղղութեամբ է եղել այդ ազդեցութիւնը, հնարաւոր կը լինի ասել, եթէ պարզուի երկու համակարգերի ստեղծման ժամանակը: Շարադրուած մօտեցումից բխում է, որ հնագոյնը հայոց գիրն է, քանի որ սրանից է փոխառուել յունականը, որը դարձել է վրացականի նախօրինակը: Սակայն հազիւ թէ ամէն ինչ այնքան պարզ է, եւ չի բացառում, որ փոխազդեցութիւններն, այնուամենայնիւ, երկկողմանի եղած լինեն:

ԱՍՓՈՓՈՒՄ

Գրանշանների ձեւերի փոփոխման վրայ հիմնական ազդեցութիւնը թողնում են արագագրութիւնը եւ գրչական կարգը: Դրանք կարելի է ուսումնասիրել առարկայօրէն՝ մեխանիկայի օրէնքների կիրառմամբ, կամ փորձագիտական եղանակներով:

Հայոց եւ հիւսիսսեմական տառաձեւերի համեմատութիւնը վերոյիշեալ եղանակներով ցոյց է տալիս, որ հայոց տառերի զգալի մասը հիւսիսսեմական գրանշանների արագագրական ձեւերն են: Դրանք 22 են՝ Ա, Բ, Գ, Դ, Ե, Զ, Է, Թ, Ի, Ծ,

Կ, Ղ, Մ, Ն, Շ, Ո, Պ, Ր, Ս, Տ, Ի, Ք: Սրանց մեծ մասը՝ 15-ը, այս կամ այն չափով պահպանել է սեմական անուանումները կամ դրանց հետքերը: Հայոց տառերը պահպանել են սեմական գրանշանների ե՛ւ հնչիւնային արժէքը, ե՛ւ նկարուածքը, հետեւապէս՝ դրանք պիտի փոխառուած լինէին մօտաւորապէս Բ. ա. Ժ. դարում: Հետագայում դրանք յաւելուել են հայկական ծագում ունեցող եւս երկու՝ Խ եւ Փ տառերով՝ դառնալով հայոց մաշտոցեան այբուբենի կորիզը: Հաւանաբար, սրանք են, որ յայտնի են որպէս «դանիէլեան նշանագրեր»:

Հայոց այբուբենի մաշտոցեան կատարելագործման արդիւնքում ստեղծուել են լրացուցիչ գրանշանները, եւ որոշուել է այբբենական կարգը: Լրացուցիչ գրանշանները ստեղծուել են մասամբ եղած գրանշանների գրչական տարբերակներից, մասամբ՝ փոխառութեան միջոցով: Այլ գրային համակարգերի հետ համեմատութիւնը յանգեցնում է հետեւեալ եզրակացութիւնների: Սեմական գրանշանների փոխառումը եւ ապա ձայնաւորների համար յատուկ գրանշանների ստեղծումը կատարուել է ոչ թէ յունական, այլ հայ միջավայրում: Հետագայում եւրոպական բոլոր այբուբենների հիմքը դարձած յունական այբուբենը ածանցեալ է հնագոյն հայկականից, որն էլ իր հերթին փոխառուել էր արեւմտասեմական գրից: Եթովպական գրանշանների հետ հայոց տառերի նմանութիւնը պատահական է: Վրաց այբուբենի կորիզը յունական փոխառութիւնն է, որը ձեւաւորուել է, հաւանաբար մօտաւորապէս Բ. ա. Զ. դարի սկզբում եւ ենթարկուել արմատական բարեփոխման մէկ անգամ Բ. ա. Գ. դարում, ապա երկրորդ անգամ՝ Մաշտոցի ղեկավարութեամբ:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- 1 «Տառաբանություն» է թարգմանուել Grammatology եզրը:
- 2 Սա վերաբերում է գրի ստեղծման վաղագոյն շրջաններին: Հետագայում ձեւաորոշել են անցանցեալ գրատեսակներ (փոքրատառ, շեղագիր, ձեռագիր), որոնք նույնպէս ստացել են պաշտօնական կարգավիճակ: Երոտական տիպի լեզուներում հնագոյն կրթողային գիրը գործածուում է որպէս գլխատառ (մեծատառ):
- 3 Աճառեան Հ., Հայոց գրերը, Ե., 1984, էջ 565:
- 4 Այսպէս, մեր օրերում, էլեկտրոնային փոստից օգտուելու յարմարութիւնից ելնելով, տարերայնօրէն կիրառուում է հայոց (եւ ռուսաց, եւ այլ) լեզուի լատինատառ գրային համակարգը: Եւ ահա, չնայած որ հայոց լեզուի համար 38 տառերի փոխարէն հիմնականում կիրառուում են լատինական 26 տառերը եւ անգլերէնում ընդունուած կցագրութիւնները, այնուամենայնիւ, երբեմն, օրինակ «խ» տառի համար կիրառուում է ռուսական «x» տառը (պատկերուած անգլիական նոյնաձեւ «էքս»-ով), օրինակ «խաչատուր»-ը գրուում է «Xachatur»: Բնականաբար, այս հնարքը կիրառուում է միայն այն դէպքում, երբ նամակագիրն իր նամակն ուղղում է ռուսերէնին ծանօթ որեւէ մէկին: Անգլախօսին գրելիս այդ նոյն մարդը կը գրի արդէն ոչ թէ «Xachatur» (այլապէս դա կ'ընթերցուի «Բասչատուր» կամ նոյնիսկ՝ «էքսաչատուր»), այլ «Khachatur»: Այս գործընթացում կիրառուում է գրի պատմութիւնից մեզ յայտնի մէկ այլ հնարք եւս՝ սկզբնահնչիւնային սկզբունքը: Օրինակ, «Ը» տառի փոխարէն (որը բացակայում է ե՛ւ ռուսերէնում, ե՛ւ անգլերէնում) ներկայումս կիրառուում է անգլերէն կրճատագիր «@» («ըթ») նշանը: Որպէս զանազան գուգադիպութիւն կարելի է նշել այն, որ «@» նշանի հնչիւնային արժէքը («ըթ») համընկնում է հայերէն «Ը» տառի այբբենական անուանը:
- 5 Այս տեսակէտն ընդունում է, մասնատրապէս, Ա. Փերիխանեանը: Периханян А., К вопросу о происхождении армянской письменности, - «Переднеазиатский сборник», II, М., 1966, էջ 113.
- 6 Ինչպէս գիտենք, հայկական տառաձեւերը յունականից ծագած լինելու կարծիքն ամենատարածուածն է, ինչը հիմնատրուում է նաեւ բանասիրական եւ քաղաքագիտական տեսակէտից: Այս կարծիքն ընդունում են, մասնատրապէս, Հր. Աճառեանը, Ա. Արրահամեանը եւ ուրիշներ: Հր. Աճառեանը հայոց գրեթէ բոլոր տառերը դուրս է բերում յունականից՝ շուրջ 21-ը: Սակայն շատ դէպքերում Աճառեանը գալիս է այդ տեսակէտին հակամակնական դատողութիւնների արդիւնքում: Մասնատրապէս, ընդունելով արագագրութեան ազդեցութիւնը գրանշանների ձեւի վրայ, միեւնոյն ժամանակ այդ մօտեցումը հետեւողա-

- կանօրէն չի գործածում: Օրինակ նրան յաջողուում է հայերէն Բ-ն նույնպէս դուրս բերել յունական Բ-ից, չնայած որ հէնց իր իսկ նախորդ դատողութիւնների տրամաբանութեամբ դա հնարատր չէ: Ընդ որում, նա բերում է Մարկուարտի առարկութիւնն այդ հաշուով (թէ այդ դէպքում հայերէն Բ-ն կը նմանուէր Բ-ին)՝ համարելով, որ քանի որ հայերէնում յունական կտրները բացուում են, ապա Բ-ի երկու կտրները կը բացուէին եւ կը ստացուէր հայկական Բ-ն: Սակայն պարզ է (եւ դա իրաքանչիւրը հեշտութեամբ կարող է ստուգել՝ փորձելով արագ գրել Բ տառն ունեցող որեւէ բառ), որ իրապէս է Մարկուարտը, եւ իրօք բացուել կարող է միայն ստորին օղակը (կամ միայն վերեւինը՝ կախուած ձեռագրից, բայց երբեք ոչ երկուսը միաժամանակ), ինչպէս եւ լինում է յունական (ռուսական, լատինական) ձեռագրերում՝ Բ: Բանն այն է, որ կտրները բացուում են, ոչ այն պատճառով, որ ինչ-որ մէկը որոշել է, թէ դրանք պիտի բացուեն, այլ քանի որ այդպէս ստացում է գրչի վրայ ազդող ուժերի բերումով, այսինքն՝ օրինաչափօրէն:
- 7 Սեմական լեզուներից փոխառուած լինելու կողմնակիցների շարքում պէտք է յիշատակել Տաղաարեանին, Յարութիւնեանին, Փերիխանեանին: Ընդ որում, Տաղաարեանն այն կարծիքին է, որ փոխառութիւնը կատարուել է փիւնիկեցիների՝ առեւտրական եւ նման այլ շփումների ընթացքում, ինչը միանգամայն հաւանական է թւում:
- 8 Այստեղ ներկայացուած է նաեւ ռուսական տառի ծագումը: Սովորաբար համարում է, որ սլաւոնները փոխառել են յունական այբուբենը, երբ յունարէնում կատարուել է [բ]-[վ] հնչիւնափոխութիւնը, ուստի եւ յունական Բ-ն կիրառուել է ռուսական [վ]-ի համար, իսկ ռուսական [բ]-ի համար կամայական միջամտութեամբ ստեղծուել է նոր՝ Բ նշանը: Իհարկէ, տեսականօրէն սա չի կարելի բացատել, սակայն բերուած գծանկարից երեւում է, որ ռուսական տառն, ըստ ամենայնի, պարզապէս յունական Բ-ի գրչական մի տարբերակն է: Սրանից կարող է հետեւել, որ սլաւոնները յունական գիրը փոխառել են անցումային փուլում, երբ Բ-ն արդէն գործածուում էր [վ]-ի համար, սակայն երբեմն էլ դեռ՝ [բ]-ի, այսինքն՝ միջին յունարէնի ձեւաորման սկզբնական փուլում: Բանի որ միջին յունարէնը սկսուել է ձեւաորուել Ջ. դարում, դա հնարատրութիւն է տալիս մօտատրապէս թուագրել սլաւոնների կողմից յունական այբուբենի փոխառման պահը Ջ.-Լ. դարերով, ինչը համընկնում է «ժողովուրդների մեծ գաղթի» ժամանակաշրջանին, եւ սլաւոնական պետականութեան կայացման նախաշեմն է (Թ. դար), եւ կրկին հաստատում է գրի եւ պետականութեան անբաժան կապը: Սրանից հետեւում է նաեւ, որ հէնց կիրիլլագիրը պէտք է համարել ռուսական հնագոյն գրային համակարգը, իսկ

- գլագոլագիրը՝ անցանցեալ, չնայած որ ներկայումս առանելապէս ընդունուած է հակատակը:
- 9 նմոյշը՝ Դ. Дирингер, Алфавит, М., 1963, Գ. 284:
- 10 նմոյշը՝ Դ. Дирингер, Алфавит, М., 1963, Գ. 237:
- 11 Տեկորի տաճարի (Ե դար) արեւմտեան մուտքի ճակատակալ քարին փորուած՝ Սահակ Կամսարականի շինարարական արձանագրութեան տառաձեւը (ըստ Լիպարիտ Սաղոյեանի):
- 12 А. Периханян, К вопросу..., էջ 117:
- 13 Հր. Աճառեան, Հայերէն արմատական բառարան, Ե., 1971, էջ 564:
- 14 Նոյն տեղում:
- 15 Հաւանաբար, եթէ չկատարուէր [ե]-[ը] հնչիւնափոխութիւնը մեր գրում (ինչպէս եւ շատ այլ համակարգերում), չէր էլ յայտնուի [ը] հնչիւնը նշանակող տառ, քանի որ հնչիւնաբանական առանձնայատկութիւնների պատճառով այն չի ընկալուում որպէս հնչոյթ, օրինակ՝ գաղտնավանկում:
- 16 Հ. Մնացականեան, Հայկական տառապատկերներ, Ե., 1979
- 17 նմոյշը՝ Դ. Дирингер, Алфавит, Գ. 137:
- 18 Արդի սեմական լեզուներում ունի [ց] արժէքը. հնում արտայայտել է լեզուի որոշակի լարումով արտաբերուող [ս] հնչիւնը:
- 19 Եթէ խ եւ Փ գրանշանների նշումն ճանապարհով գոյացումը հաստատուի, դա կը նշանակի, որ հնագոյն ժամանակներում հայոց մէջ եղել է ինքնուրոյն հնչիւնային գիր ստեղծելու կամ սեմական գրի կատարելագործման եւս մի փորձ:
- 20 Աճառեանը խօսում է պահլաական մի տառաձեւի մասին:

- 21 Պէտք է ասել, որ ըստ Մ. Դիւնանի, յունական անունները կարող են անելի հին լինել եւ անցանցեալ՝ փիւնիկերէնից: Դրանով կարող էր բացատրուել, որ, օրինակ, ունենք յունական «գամմա», որը կարող էր ծագել «գամալ»-ից (ուղտ), եւ «րո»՝ «րոշ»-ից (գլուխ), իսկ հետագայում արամէերէնի ազդեցութեան տակ սեմական անունները կարող էին փոխուել՝ դառնալով «գիմել», «րէշ» եւ այլն: Սակայն հայկականի եւ յունականի յարաբերութիւնները դա առանձնապէս չի փոխում, քանի որ արամէականի ազդեցութեան տակ կարող էին փոխուել նաեւ հայկական անունները, մինչդեռ յունականները կարող էին անելի հաւատարիմ մնալ աւանդութիւն: Որպէս դրա հետեւանք՝ կարելի է տեսնել ոչ միայն հայոց տառանունների հնչիւնափոխումը, այլեւ՝ կրճատումը:
- 22 И. Фридрих, История письма, М., 1979, էջ 128:
- 23 Т. В. Гамкрелидзе, Алфавитное письмо и древнегрузинская письменность. Тбилиси, 1989.
- 24 Հր. Աճառեան, Հայոց գրերը, Ե., 1984, էջ 529:
- 25 F. Miltner, Die entwicklungsgeschichtliche Stellung der kleinasiatischen Alphabete, - «Forschungen und Fortschritte», Bd 14, 1938, էջ 407 եւ յաջորդ. (ըստ И. Фридрих, История письма, էջ 130):
- 26 Նախորդի նախաբանում:
- 27 Գ. Սեւակ, Մեքորայեան գրերը, նրանց կառուցածքի սկզբունքները եւ աղբիւրները, - «Մեքորայ Մաշտոց», Ե., 1963:
- 28 Т. В. Гамкрелидзе, Алфавитное письмо и древнегрузинская письменность. Тбилиси, 1989.
- 29 Т. В. Гамкрелидзе, նույն տեղում:

